№ 160 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՅՈՒԼԻՍԻ

1911

ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 27 ՅՈՒԼԻՍԻ № 160

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.

Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.

Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"

Խմբագրատան տէլէֆօն № 253.

# ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—12
(բացի կիրակի և տօն օրերից).

Յայտարարութիւն ընդունվում է ամ[illegible]

Յայտարարութիւնների համար վճ[illegible] են
իւրաքանչիւր տողատեղին 20 կո[illegible]

Տպարանի տէլէֆօն № 67.

**ՄՇԱԿ**
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

**Օգոստոսի 1-ից մինչեւ տարվայ վերջը 5 րուբլի։**

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պիտի վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршалковская, 130, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

**ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ**

Վարդան, Արգար և Լուսիկ Տէր-Բարսեղեանները, Հեղինէ և Մկրտիչ Էքսիւզեանները սրտի խորին կսկիծով յայտնում են ազգականներին, բարեկամներին և հանգուցեալի ծխականներին—առաջինները՝ իրանց անմոռանալի հօր, իսկ վերջինը իր աներոջ՝

**Տէր-Շմաւոն քահանայ ՏԷՐ-ԲԱՐՍԵՂԵԱՆԻ**

մահ, որ տեղի ունեցաւ յուլիսի 23-ին, երեկոյեան ժամը 8-ին, կարճատև, բայց ծանր հիւանդութիւնից յետոյ։

Աճիւնի տեղափոխումը դէպի Շամքօռեցոց Կարմիր-Աւետարան եկեղեցին նոյն եկեղեցու դպրոցի շէնքից տեղի կունենայ այսօր երեկոյեան ժամը 5-ին։ Վաղը, հինգշաբթի, յուլիսի 28-ին, պատարագի սկիզբը առաւօտեան ժամը 10-ին, օծումը ժամը 11-ին, իսկ Թաղումը Խօջիվանքի գերեզմանատանը։

742. 1—1

## ԱՒԱԶԱԿՈՒԹԵԱՆ ԴԷՊՔԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Վերջին շաբաթների քրօնիկօնը բերեց մեզ աւազակութեան դէպքերի բազմանալու տխուր լուրեր մեր երկրում։

Աւազակային յարձակումները Շուշու, Նախիջեւանի, Փամբակի և ուրիշ շրջաններում ցոյց են տալիս, որ յանցաւոր տարրերը սկսում են յանդգնանալ և իրանց ազատ զգալ կողոպուտներ և սպանութիւններ անելու համար։

Մարդկանց երթևեկութիւնը, որ վերջին ժամանակները բաւականաչափ ապահով էր դարձել մեր երկրի զանազան մասերում, նորից վտանգվում է մի քանի տեղերում։

Անկասկած՝ անհրաժեշտ է իսկոյն և եթ առանձին ուշադրութիւն դարձնել այդ տխուր երևոյթի վրա և առաջին փորձերից իսկ նրան արմատախիլ անել, որովհետև այդպիսի յանցաւոր դէպքեր եթէ անմիջապէս չեն վերացվում, նրանք դառնում են վարակիչ և ծնում են իւրատեսակ հերոսների ու օրէնքից դուրս ապրող մարդկանց խմբակներ, որոնց ոչնչացնելը յետոյ շատ դժուարանում է։

Աւազակութեան դէպքերը ծանր են ազդում ազգաբնակութեան վրա ոչ միայն այն իրական վնասով, որ նրանք հասցնում են անմիջապէս, այլ և աւելի մեծ վնասով, որ նրանք պատճառում են՝ դժուարացնելով երթևեկութիւնը երկրի մէջ։

Արդարև՝ երբ մի գաւառում երեւում է աւազակային մի խումբ, որը մի երկու մարդ է սպանում և մի քանի հազար րուբլու կողոպուտ վերցնում, նա պատճառ է դառնում, որ հարիւրաւոր ու հազարաւոր մարդիկ կրճատեն իրանց երթևեկութիւնը և այնպիսի ծախքերի մէջ ընկնեն, որ վերջ ի վերջոյ ստացվում են տասնապատիկ աւելի կորուստներ, քան տուել են իրական ոճիրները։

Մանաւանդ՝ ծանր է այդ հանգամանքը մեր երկրում, ուր հաղորդակցութեան ճանապարհները չափազանց վատ են և կարօտ են առանց այն էլ յատուկ պաշտպանութեան և բարւոքման։

Անշուշտ՝ ոճիրների դժբաղդ դէպքեր պատահում են և ուրիշ երկիրներում։ Եւ մենք տեսնում ենք սպանութիւնների և կողոպուտների յիշատակութիւններ աւելի կուլտուրական երկիրներում, բայց դրանք հազուագիւտ բացառութիւններ են և անպայման դատապարտվում են հասարակական կարծիքի կողմից։ Մինչդեռ մեր երկրում, ուր դեռ չեն մոռացվել հին կեանքի ազդեցութիւնները և ուր աւազակները հեշտութեամբ հերոսների անուններ են վաստակում ազգաբնակութեան որոշ շրջաններում, մենք դեռ ևս տեսնում ենք, թէ ինչպէս աւազակը պատսպարան է գտնում իր համար օրերով, շաբաթներով և նոյնիսկ ամիսներով։

Աւազակութեան գոյութիւնը չափազանց անբաւարար և ստոր քաղաքացիական կեանքի ապացոյց է։ Աւազակութիւնը մի արատ է, որը պէտք է վերացած լինի հասարակական կեանքի ամենաթոյլ զարկերի բաշխման շրջաններում։

Ազգաբնակութիւնը ապահով կեանք է խնդրում և ազատ շարժումն երկրի մէջ։

Առանց այդ պայմանի նա անկարող է ազատօրէն գործել և զարգանալ։

Բաւական է, որքան մեր աւանդական կեանքը ճնշեց և փոքրացրեց մեզ։

Գոնէ այժմ պէտք է մարդ-արարածը ապահովված լինի կուլտուրական կեանքի այդ ամենահասարակ պահանջների բաւարարութեան հնարաւորութեամբ։

Աւազակների սխրագործութիւնների աջողութիւնը մի վիրաւորանք է մեր ժամանակակից կեանքի համար։

Եւ մարդկային զգացմունքը վրդովվում է ամեն մի դէպքից, որ մեզ յիշեցնում է միջնադարեան կեանքի մութ արկածները։

Մեր դարը անկարող է հաշտվել այդպիսի երևոյթների հետ։

Ս. Քալանթար

## ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յուլիսի

Վաշինգտոն.—Սենատը հրատարակեց միջնորդ դատարանի մասին Անգլիայի և Ֆրանսիայի հետ կապված պայմանագրերը։ Պայմանագրերի բովանդակութիւնը միանման է։ Անգլիայի հետ կապված համաձայնութեան նախաբանում ընդծված է մի ցանկութիւն, որպէսզի 1814 թւից գոյութիւն ունեցող բարեկամական համերաշխութիւնը կայուն լինի։ Պայմանագիրը պարունակում է եօթն յօդուած։ Նրա ժամանակը երկամեայ է։ Պայմանագրով տարաձայնութիւնները վճռվում են Հաագայի կօնֆերենսում կամ այլ միջնորդ դատարանով, ինչպէս այդ կարելի է սահմանել առանձին համաձայնութեամբ։ Անգլիան իրան իրաւունք է վերապահում կնքել նախօրօք յատուկ համաձայնութիւն ինքնավար գաղութների շահերը շօշափող հարցի առիթով, ստանալ այդ գաղութի կառավարութեան համաձայնութիւնը։ Նախատեսված է հիմնել մի միացեալ մանաժողով՝ կողմերից մինի պահանջով՝ նախ քան դատարանը գործերը կանխապէս քննելու համար։ Մասնաժողովի եզրակացութիւնը միջնորդ վճիռների բնոյթ չէ ունենալու։

—

Լոնդոն.—Համայնքների պալատում Բալֆուրի հարցին նոր պէրեր նշանակելու առիթով Ասկվիթն ասաց, որ պէրեր նշանակելու խորհուրդը գահին տրվեց նրանից յետոյ, երբ լորդերը իրանց ուղղումներն առաջարկեցին պարլամենտական օրինագծի համար։ Յետոյ Բալֆուրը առաջարկեց պալատին ընդունել կառավարութեանը պարսաւանք յայտնող բանաձևը։

—

Պետերբուրգ.—Առաւօտեան Հին Պետերհօֆից Պետերբուրգ փոխադրվեց առևտրի մինիստրի օգնական Միլլերի մարմինը։ Կայարանում ընդ առաջ եկան առևտրի մինիստրը և մինիստրութեան բարձր պաշտօնեաները։ Թաղումը տեղի ունեցաւ Սմօլէնսկի գերեզմանատանը։

—

Բագու.—Կասպիական-չերնօմորական ընկերութեան նաւթահանքում այրվեցին տասն վիշկա և երեք փորիչ մեքենայ։ [illegible] վնասները 70,000 րուբլի են։

—

Տօկիօ.—Կայսերայի կաբինէտի հրաժարականի հետ միասին խօսում են Կորէայի գեն.-նահանգապետ Տէրաուչիի հրաժարականի մասին։ Նրան յաջորդ անուանում են նախկին զօրահրամանատար Խասեգաւային։

## ԳՈՐԾԱԴՈՒԼ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յուլիսի

Լիվերպուլ.—Գործադուլ արին հիւսիսային և հիւսիս-արևմտեան երկաթուղիների 12,000 բանւորներ։ Երկիւղ են կրում, որ գործադուլին կը միանան միւս գծերի բանւորները։ Երկաթուղային երթևեկութիւնը կանգ է առել։

—

Լոնդոն.—Վաղը բանակցութիւններ կը վարեն նաւատէրերը և բանւորները։ Գործադուլը տարածվել է Մէդուէյ գետի հովտում, ուր կանգ են առել արքունի աշխատանքները։ Տրաֆալգարի ծառաստանում 14,000 գործաթող բանւորների միտինգին յայտարարվեց, թէ միջնորդ դատարանը հարկաւոր է գտել բաւարարութիւն տալ աշխատավարձը աւելացնելու պահանջին։ Կարծում են, որ վաղը աշխատանքները կը թողնեն 60,000 մարդ։ Լոնդոնի կառապանների միութիւնը, որ 25,000 անդամ ունի, վճռեց գործադուլ անել։

## ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ԲԱԼԿԱՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յուլիսի

Կ. Պոլիս.—Ինչպէս յայտնի է, վերջերս մայրաքաղաքում կալանաւորվեց յունաց դեսպանատան գանձապահ Կօնդօեանիսը, որը և ենթարկվեց ծեծ ու ջարդի։ Այդ առիթով Յունաստանի և Թիւրքիայի յարաբերութիւնները սուր կերպարանք առան։ Այդ հանգամանքն ի նկատի ունենալով՝ կարգադրվեց թիւրքական նաւատորմին շրջել Արշիպելագում։

—

Ցէտինիէ.—Հայրենիք վերադարձան 2,000 մալիսօր Տուզի վրայով, 1,000 հոգի Զատրիէվայի վրայով, 1,000 հոգի Գրուդի վրայով։

Գեներալներ Վուկօտիչը և Մարտինովիչը վերադարձան Պօդգօրիցայից Ցէտինիէ։ Նիկօլայ թագաւորը հեռագրով սուլթանին ուրախութիւն յայտնեց ապստամբութեան խաղաղ ելքի և երկու պետութիւնների բարեկամական յարաբերութիւնների վերականգնման առիթով։

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

25 յուլիսի

Ուրմիա.—Սալմաստից հաղորդում են, որ նախկին շահի գալու օրից տեղական ազգաբնակութիւնը զինվում է։

Աւազակ Ռուստամ-բէկը, սիւննիների Բէնդա գիւղի կապալառուն, որի ազգաբնակութիւնը իրան Թիւրքահպատակ յայտարարեց, կրակեց նահանգապետ Իջա-ուլ-Միւլքի վրա, բայց գնդակը վրիպեց։

Սալմաստից հաղորդում են, որ քիւրդերի մի աւազակախումբ յարձակվել է Զարանգու գիւղի վրա և քանդել է Խօյի ու Սալմաստի միջև շինված հեռագիրը։

Սիւննիների Բալօվ գիւղում մի սիւննի գեղջուկ բռնաբարեց համագիւղացի մի ասորի աղջկայ։ Աղջկայ ազգականների խնդրքով ռուսաց հիւպատոսը սեփական պահակախմբի և Ուրմիայի ժանդարմերիայի պետի ուղեկցութեամբ հետապնդեց յանցաւորին, որը թագնվեց։ Հիւպատոսի պահանջով՝ յանցագործի համախոհները կալանաւորվեցին և պատժվեցին։

## ԴԷՊՔԵՐՆ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

Թաւրիզ, 21 յուլիսի

Մօտ երկու ամիս առաջ Արդաբիլում տեղի ունեցած կռիւները շահսէվանների հետ, կառավարութեան զօրքերի չարաչար պարտութիւնը, նոյն քաղաքի դատաւոր և կառավարական զօրքի հրամանատար Ռաշիդ-ուլ-Միւլքի Ահար փախչելը՝ արձանագրվել են «Մշակում» իր ժամանակին և յայտնի են «Մշակի» ընթերցողներին։ Թաւրիզի կառավարութիւնը մի ամսից աւելի է ձերբակալել ու բանտ էր նստեցրել Ռաշիդ-ուլ-Միւլքին՝ համարելով նրան դաւաճան, անհաւատարիմ հայրենիքին և միանգամայն կաշառակեր ու հարստահարիչ։

Նախկին շահ Մահմէդ-Ալիի մուտքը Պարսկաստանի սահմանները, նրա եղբայր Սալար-ուդ-Դովլէի ապստամբութեան դրօշ պարզելը Քիւրդիստանի սահմաններում, մինչև Համադան առաջանալը էքս-շահի հաշւին ու աջողութեանը, այս բոլոր հակապետական խլրտումները դրդեցին, կենդանացրին երկրի սահմանադրական տարրերին՝ ոտի կանգնելու ու պաշտպանելու երկիրը վերահաս վտանգից։ Կեանքի նշաններ ցոյց տուին նաև Թաւրիզում ապրող երիտասարդ պարսիկները։ Հարկաւոր էր զօրք ու զօրութիւն ձեռք բերել սահմանադրութիւնն ու երկիրը նախկին շահի ճանկերին չը յանձնելու համար. ուստի առաջին և գլխաւոր գործը պէտք է լինէր դրամական աղբիւրներ ճարելը, և այդ նպատակով կազմեցին գիշերային ժողովներ՝ անջումանի նորընտիր անդամ և մուշտէիդ Սէյիդ-ուլ-Մուհագիգինի տանը, ուր վճռվել է, ասում են, դրամատէր պարսիկ վաճառականներից ժողովել 2—300,000 թուման մի գումար՝ առաջիկայ ռազմական պէտքերին ծառայեցնելու համար։ Մեծաքանակ դրամ ձեռք բերելու համար անհրաժեշտ է համարվել սարսափ տարածել, և այդ միջոցով միայն հասնել ցանկալի հետևանքի։ Այդ որոշման առաջին զոհերը պէտք է լինէին Ռաշիդ-ուլ-Միւլքը և տիրահռչակ կալանաւոր Ռահիմ-խանը։ Մուջահիդները վճռել և պահանջում էին, որ երկուսն ևս կախաղան բարձրանան՝ իբրև գերագոյն դաւաճաններ, ենթադրելով որ Ռահիմ-խանի կախվելը խոշոր չարիքների պատճառ կարող է դառնալ որոշել են յետաձգել առժամանակ, և կախաղանը ի գործ դնել Ռաշիդ-ուլ-Միւլքի համար միայն։ Թաւրիզի կառավարութիւնը, որի հետ և կենտրոնը, համաձայնում է կախաղան բարձրացնել յիշեալ դատաւորին և այդ եղանակով ևս տարածել սարսափ։

Եւ յուլիսի 14-ին ձայն տարածվեց քաղաքում, որ նոյն օրը կախելու են Ռաշիդ-ուլ-Միւլքին։ Յիշեալը ռուսաց պետութիւնից ստացած ունէր Ստանիսլաւ պատւանշանի II աստիճանը. այդ պատճառով ևս որոշ աստիճան վայելում էր ռուսաց պետութեան պաշտպանութիւնը։ Ռուսաց հիւպատոսը, Միլլեր, իր դերի մէջն էր. որովհետև կախաղանի վճիռը 2—3 ժամից յետոյ գործադրվելու էր, այդ պատճառով նա անձամբ Յանդամ դիմեց նահանգապետի փոխանորդին և պահանջեց, որ ապացոյցներ տան Ռաշիդ-ուլ-Միւլքի մահապարտութեան արժանի յանցանքի համար։ Հիւպատոսի ցանկութեամբ անմիջապէս եկան 100—150 զինւորներ, պաշարեցին նահանգապետի շինութիւնը, ուր բանտարկված էր Արդաբիլի դատաւորը, բաց արին դուները, վերցրին Ռաշիդ-ուլ-Միւլքին և ազատօրէն տարան հիւպատոսարան և այնտեղից բանակը։ Սևանդման ժամանակ ոչ մի ընդդիմադրութիւն տեղի չունեցաւ. ընդհակառակը բոլոր պաշտօնեաները խոյս էին տուել։ Դէպքից յետոյ անջումանի անդամները և կառավարութեան ուրիշ մարմիններ մտան հեռագրատուն և անցքը յայտնեցին Թէհրան։

Ռուսաց կողմից մի քանի օր է, որ գիշերները պահակ զինւորներ են շրջում քաղաքը յուզումներից պաշտպանելու համար, թէպէտ մինչև օրս ոչ մի դէպք տեղի չունեցաւ։

Մի օր առաջ պարսիկ դեմօկրատների նախաձեռնութեամբ հսկայական մի միտինգ էր կազմվելու Մաշխ մէյդանում. նրանք եկան և տեսան, որ ռուս կօզակները շրջապատել են հրապարակը, առանց, ի հարկէ, հրապարակը մտնողներին արգելք լինելու։

Դեմօկրատները խուսափեցին հրապարակային միտինգ գումարելուց և ժողովվեցին Ջումա Մէջիդ մզկիթում, ուր 1—2,000 բազմութեան ներկայութեամբ խօսեցին 4 պարսիկ հռետորներ միևնոյն նպատակով,

Եթէ հաւատանք տիրող եռանդին, էքս-շահի ձգտումը՝ գրաւել գահն ու թագը՝ կը հանդիպի արիւնահեղ ընդհարումների։

Հայկազուն

## ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 9 յուլիս

◆ Ջէմալ-բէյ, որու Պոլիս երթալը գրած էի, գնաց ու ալ չդարձաւ։ Հասան-Բէյլիի եկեղեցիին քանդումին մէջ իր վանդալական դերը, իր դիրքը՝ բաւական զօրաւոր արդարև՝ խախտած ըլլալով, երբ Թիւրք կառավարութիւնը քաջութիւն չունեցաւ քաջալերել քաղաքականութիւն մը, որ իսպառ հակասական պիտի ըլլար, իր գէթ առերեւոյթ՝ ազատական սկզբունքներուն, ու Ջէմալ-բէյ ի պատիժ իր այդ անխորհուրդ ընթացքին... անուանուեցաւ Բաղդադի կուսակալ։

«Ազատամարտի» խմբագրին հետ տեսակցութեան մէջ Ջէմալ-բէյ ցաւ յայտնած էր Հասան-Բէյլիի եկեղեցիին քանդումին առթիւ հայ մամուլին բուռն լեզուին համար թէ՝ անոնք կը մոռնային Ադանայի աղէտներուն հետեւող իր շինարար ընթացքը։

Ոչ ոք Ջէմալ-բէյ կը դատապարտէ իր շինարար գործերուն համար, և չեմ կարծեր թէ իր պաշտօնավարած կուսակալութեան մէջ հայերէ աւելի գնահատող մը կըրցաւ գտնել, բայց չենք հասկնար իր ցաւին պատճառը։ Ի՛նչ, կիլիկեան անօրինակ աղէտներէն վերջ եկող պաշտօնատարի մը ինչ կը մնար ընելու... երբ աւերելու ոչինչ չէր մնացած։ Մինչ Հասան-Բէյլիի եկեղեցիին առթիւ իր անպատւելի վարմունքն անգամ մը ևս եկաւ հաստատելու, որ ամենէն աղէկն իսկ կարծուած իր նըմաններէն, մեր երանելի երկրին մէջ, շինելէ աւելի քանդել գիտէ։

Զարդ ու կոտոր Ադանայի մը մէջ ժողովրդականութիւն և շինարարութեան դափնիներ վաստկիլ դիւրին էր։ Տեսնենք թէ Ջէմալ-բէյ իր նոր պաշտօնատեղին, ուր չկայ հայու նման ժողովուրդ մը, ուր արաբներէն զատ կայ և օտար հզօր պետութեան մը անյաղթելի դժուարութիւնը, պիտի կրնա՞յ այնպէս պատուով դուրս ելնել, ինչպէս ելաւ... Ադանայէն։

◆ Ջէմալ-բէյին Բիթլիսի կուսակալը պիտի յաջորդէր, բայց երեսփոխաններու դիմումին վրայ ան իր տեղը մնաց՝ Խոթի գաղանները հետապնդելու, և Ադանա եկաւ Մուհամմէդ-բէյ, Կեսարիոյ կառավարիչը։

Մուհամմէդ-բէյի պաշտօնավարութիւնը քննադատելը կանխահաս է դեռ։ Մաղթենք միայն, որ Հասան-Բէյլիի եկեղեցիին քարուքանդումէն կոտրած հայ սիրտերը ան կարողանայ շինել։

Մուհամմէդ-բէյ մէկն է այն պաշտօնատարներէն, որոնք Թիւրքական յեղափոխութենէն ծնած և երէկի աննշանութենէն՝ պետական ամենաբարձր աստիճաններու հասած են։ Այս հրաշքը, վերջին տարիներս, մեր երկրին մէջ սովորական եղած է, բայց մենք Մուհամմէդ-բէյին այս յաջողութիւններէն դժգոհ մնալու պատճառ մը չունինք։ Կիլիկեան կոտորածներուն Մուհամմէդ-բէյ Ալիւլէի կայմակամն էր, ենթակայ Սըվազի կուսակալութեան և մօտիկ՝ Հաջինի սահմաններուն։ Երբ մահմեդականներն ամենուստ պաշարած էին Հաջինի պատկանող Շար-Դէրէի հայաբնակ գիւղը, Մուհամմէդ-բէյ ազնւութիւն ունեցաւ պաշտպանել և ազատել շար-դէրէցիները, թէև իրենց ինչքերը և տուները կողոպտուեցան ու այրուեցան։

Մաղթենք, որ հայութեան այս համարումն ալ, ինչպէս իր նախորդին հանդէպ, դառն յուսախաբութեան չփոխուի։

◆ Քանի որ պաշտօնեաներու մասին կը խօսինք, շարունակենք։ Անցեալները մեռաւ Մերսինի կառավարիչը, որ ազգաւ քրիստոնեայ էր և սիրիացի։

Մեզ համար շահագրգռական էր այդ ծերունին այնու, որ ան Անատոլուի ընդհանուր քննիչ հռչակաւոր Շաքիր փաշայի օգնականն էր, երբ ան սուլթան Համիդի աչքակապութեամբը հայկական գաւառները բարեկարգելու համար Անատոլու կը պտըտէր... Ջարդերը նախապատրաստելու համար։ Ու ոչինչ։

Մի-Նա

## ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐ ԹԻՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻՑ

**Սահմանադր. տարեդարձը հայերի շրջանում**

Վան, 16 յուլիսի

Յուլիսի 6-ին Վանի բոլոր կուսակցականները—հայ ու թիւրք—տօնական պատբաստութիւններ էին տեսնում՝ տօնելու օսմանեան սահմանադրութեան տարեդարձը։

Ամսիս 9-ին հայ կուսակցականները (Սահմ.-Ռամկ., Հնչակ., Դաշ.) Թիւրք իթթիհադականներից և կառավարական տնից գրութիւն ստացան, որ «հայերը կարող են տարեդարձի հանդէսին մասնակցել որպէս առանձին ժողովուրդ և ոչ թէ կուսակցական մարմին»։

Բոլոր հայ կուսակցականները ժողովուեցին Այգեստան խորհրդի՝ հետևեալ օրը, ամսիս 10-ին, սահմանադրութեան երրորդ տարեդարձը տօնելու։

Առ. ժամը 8-ին Խաչ-Փողոցի վրա, «Աշխատանքի» խմբագրատան առաջ, հետզհետէ հաւաքվեց ժողովրդի մեծ բազմութիւն։ Բոլոր կուսակցականները իրանց դրօշակներով և ներկայացուցիչներով եկան միացան ու առաջ անցան Խաչ-Փողոցի կենտրոնը, ուր և սկսեցին ատենախօսել ու երգել։ Այդտեղ՝ ոգևորված ատենախօսները, դժգոհ՝ Թիւրքերի անշնորհակալ վարմունքից, առաջարկում էին յանուն յիշատակելի նահատակների շարունակել գործել՝ առաջադիմելու և կուլտուրապէս յաղթելու խաւարի կողմնակիցներին, որոնք այսօր այդքան աներախտագէտ գտնվեցին։

Ամբոխը ապա շարժվեց առաջ, և միւս բոլոր կուսակցութիւնների գրադարանների առաջ նման ճառեր արտասանվեցին։ Երեկոյեան նորից ժողովվեց ամբոխը «Աշխատանք», «Մարտիկ» և «Աւետիսեան» գրադարանների առաջ և երգեց, բանախօսեց ու պարեց։ Շատ հետաքրքրական էին ժողովրդական համաչափ քայլուածքով պարերը և երգերը։

Իւրաքանչիւր գրադարանի առաջ շինված էին կամարներ՝ դրօշակներով և լապտերներով զարդարված։

Հանդէսը շարունակվեց մինչև ուշ գիշեր։

Սաթ. Զաքարեան

## ԽՈԼԵՐԱ

Աստրախան.—Մի շաբաթում նահանգում հիւանդացան խոլերայով 22, մեռան 8 հոգի։

Կ. Պոլիս.—Մի շաբաթում խոլերայով հիւանդացան 179, մեռան 90 հոգի։

Նիկոլայեվսկ.—Մի շաբաթում քաղաքում հիւանդացան խոլերայով 5, մեռան 2 մարդ։

Տրիէստ.—Երեան հանվեցին խոլերայի 3 նոր դէպք։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՈՒՍՈՒՑՉԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Եթէ ընդհանուր գրադարանները մեծ դեր են խաղում հասարակական զարգացման համար, եթէ անուրանելի է մանկական գրադարանների գոյութիւնը մանուկ սերնդի մտաւոր առաջադիմութեան համար, ապա ուրեմն չը պիտի ժխտել ուսուցչական գրադարանների օգտակար դերը ուսուցիչների մտաւոր առաջխաղացման գործում։ Ուսուցիչների իրանց մասնագիտութիւնների մէջ կատարելագործվելու և դպրոցական գործին զարկ տալու մէջ՝ ուսուցչական գրադարանները շատ մեծ դեր են խաղում։ Ուսուցչական գրադարանները այն աղբիւրներն են, որտեղից ուսուցիչները ոչ միայն իրանց մտաւոր պաշարն են լրացնում, այլև ոգի են առնում ծառայելու մանուկ սերնդի կրթութեան։ Այդպիսի գրադարանները դպրոցներին կից՝ մեծ ծառայութիւն կարող են անել մեր ուսուցիչներին։ Գիւղական ուսուցիչը դասերից դուրս շատ ժամանակ ունի իր տրամադրութեան տակ. և որպէսզի այդ ժամերը անօգուտ և տաղտկալի չանցնեն, նա կարող է խորասուզվել այդ գրքերի և ամսագրերի ընթերցանութեան և զանազան հարցերի ու մեթօդների ուսումնասիրութեան մէջ։ Կտրված՝ լուսաւոր կենտրոններից, մտերիմ ընկերներից և կրթված շրջաններից, հեռաւոր մի խուլ անկիւնում այդ տեսակ գրադարանները մի տեսակ սփոփանք կարող են լինել գիւղական ուսուցիչների համար և միևնոյն ժամանակ փոխարինող լաւ ընկերոջ։ Մեր երիտասարդ, մանաւանդ մանկավարժական դասընթացքներ չանցած ուսուցիչների համար այս տեսակ գրադարանները միանգամայն անհրաժեշտութիւն են ներկայացնում։ Նրանք կարող են այդ տեսակ ուսուցիչների գործը բաւականին թեթևացնել, ծառայելով նրանց համար իբրև ուղեցոյց։ Այդ ուսուցիչները հնարաւորութիւն կունենան իրանց կարդացածները և ըմբռնածները գործադրել իրանց դպրոցներում և այդպիսով հէնց պրակտիկայից համոզվել թէ նրանց ճշմարտութեան կամ աննպատակայարմարութեան մէջ և թէ այն բանում, թէ իրանք որքան են ճիշդ ըմբռնել այս կամ այն մանկավարժական կամ դաստիարակչական հարցը։

Վերոյիշեալից պարզ է, թէ որքան մեծ նշանակութիւն ունեն ուսուցիչների համար մանկավարժական գրադարանները։ Այդ գրադարաններն են, որ պիտի խթան ծառայեն նրանց առաջադիմութեան, նիւթ տան նրանց մտածելու, ուսումնասիրելու զանազան դպրոցական, մանկավարժական և կրթական հարցեր։ Առանց նրանց նա դատապարտվում է յետամնացութեան։ Եթէ ուսուցիչը չէ հետևում ժամանակակից մանկավարժական գրականութեան, նա անշուշտ յետ կը մնայ և կը դադարի պիտանի լինել դպրոցի համար։ Ուսուցչական գրադարանների անհրաժեշտութիւնը քաղաքներում, եթէ այնքան էլ զգալի չեն, այդ նրանից է, որ քաղաքի ուսուցիչները կարողանում են օգտվել թէ հասարակական գրադարաններից և թէ մէկը միւսի ունեցածից, բայց նոյնը չէ կարելի ասել գիւղերի վերաբերմամբ, ուր նրանք, գրադարանները, կատարեալ անհրաժեշտութիւն են ներկայացնում։ Այդպէս մեծ լինելով նրանց նշանակութիւնը, հարց է առաջ գալիս նրանց գլուխ բերելու և տարածման մասին։ Սակայն ում պարտականութիւնն է նրանց իրագործելու։ Անշուշտ հոգաբարձութեան և ուսուցիչների։

Այն հոգաբարձութիւնը, որ կարողանում է հոգալ դպրոցի ծախքերը, ես կարծում եմ, որ կարող է և մի 20—30 ր. էլ աւել զոհողութիւն անել. իսկ նրանք, որոնք տարվայ վերջը բաց են ունենում մի քանի հարիւրներ, այնտեղ թող աւելանայ և մի 40 ր.։ Իսկ եթէ հոգաբարձութիւնը կը դժուարանայ այդ անել և մանաւանդ կը ժխտի նրա անհրաժեշտութիւնը (որը հաւանական է, աչքի առաջ ունենալով նրա տգիտութիւնը) այդ դէպքում մնում է ուսուցչին իրան իրագործել այդ համակրելի միտքը։ Ուր հնարաւոր է, ուսուցչական խմբերը պիտի ներկայացումներ, տօնածառեր գլուխ բերեն և կամ աւետիս ման գան, կամ դիմեն ժողովարարութեան։ Նայած սրանցից որն է յարմար տեղական պայմաններին, պիտի այն էլ անել։

Այստեղ մեծ դեր ունեն խաղալու թեմական տեսուչները, յորդորելով հոգաբարձութեանը յատկացնել վերոյիշեալ չնչին գումարը գրադարանին։ Եթէ իւրաքանչիւր տարի յատկացվի մինչև 30 ր., մի քանի տարուց յետոյ արդէն պատկառելի գրադարաններ կունենան դպրոցները, ուր զետեղված կը լինեն գոնէ ժամանակակից մանկավարժների լաւ սակայն ներկայացուցիչների գրուածքները, մեթօդիկաները և մի երկու ռուսերէն ու հայերէն ամսագրերի սերիաներ։

Սրանից աւելի ճոխը դուք կարող էք գտնել իւրաքանչիւր ռուսաց տարրական դպրոցներում։ Այնտեղ դպրոցական ծախքերի թւում պարտաւորական է ունենալ և գրադարանի ծախքը։

Սակայն մեր պահանջած ծախքը, համեմատած նրանց հետ, շատ համեստ է և դիւրաւ իրագործելի։

Խնդիրը հերթական է, ուստի և պիտի նրան ընթացք տալ և օր առաջ իրագործել։

Ա. Դաւթեանց

## ԵՒԼԱԽ-ՇՈՒՇԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄԸ

(Վեց ամսվայ պատմութիւն)

Բագու, 10 յուլիսի

Ամսի 2-ին, տասներկու օրից յետոյ, վերջապէս շուշեցիները կարժանանան երկաթուղագծի շինութեան վերջնական լուծման ուրախալի լուրը լսելու։

Մ. Մ. Սարուխանեանն օր ու գիշեր աշխատում է, որ կամ ինքը իր կազմած ընկերութեան գլուխն անցած շինէ այդ գիծը, կամ ուրիշին ստիպէ շինելու։

Դրութիւնը հետևեալն է։

Ուղիղ վեց ամիս առաջ, յունվարի 28-ին, երբ Սարուխանեան Պետերբուրգ նստած աչալուրջ կերպով փնտռում էր այն հոգիներին, որոնք խոչընդոտ էին հանդիսանում Եւլախ-Շուշի գծի կառուցման խնդրին, վերջապէս կարողանում է վարագոյրի տակ թագնված մարդկանց գտնել։

Եւ ինչ բացվում, յայտնվում։

Երկու հրեաներ՝ Կրասնեանսկի և Ռօզենֆելդ՝ երկար տարիներ առաջ ճանապարհների հաղորդակցութեան մինիստրութիւնից Կովկասում և Ռուսաստանում երկաթուղիներ կառուցանելու վեց գծերի իրաւունք են ձեռք բերում, որոնցից մէկն էլ Եւլախից-Շուշի գիծն է։ Սակայն, ըստ Սարուխանեանի ժողոված տեղեկութիւնների, այդ երկու պարոնները վեց գծերից ոչ մէկն էլ այդ երկար ժամանակի ընթացքում ոչ միայն չեն կառուցել, այլ նոյնիսկ կառուցման ծրագիր անգամ չեն ներկայացրել մինիստրութեան, բացի 12 հատ 75 կոպ. «գերբովի մարկայից», որը ընդունված օրէնքով թոյլտուութիւն ստանալիս խնդրագրի հետ ներկայացնում են։

Եւ այդ երկու պարոնները ինն րուբլի ծախսելով նստել են վեց գծի, կամ հարիւր հազարաւոր բնակիչների բաղդի վրա։

Սարուխանեան յունվարի սկզբին նորից դիմում է մինիստրին և խնդրում վերջնական լուծում տալ հարցին, սակայն պատասխան է ստանում, որ «գծի իրաւունքը պատկանում է Կրասնեանսկիին և Ռօզենֆելդին»։

Սարուխանեանը հետևեալ օրը մի խիստ և բազմաբովանդակ խնդիր-բողոքագիր է ներկայացնում, ուր մանրամասն յիշում է այդ երկու պարոնների վեց գծի ստացած իրաւունքների թէ տարեթիւը և թէ մատնանշում է այն, որ տասնեակ տարիների ընթացքում ոչ մի ձեռնարկութիւն չէ արված այդ գծերից մէկն ու մէկի կառուցման համար, չէ ծախսված 100 ր. անգամ, և բացատրում է այդ պարոնների միտքը, որ դրանց նպատակը չէ գիծ կառուցանելը, այլ կուրտաժ ստանալու համար է իրաւունքը ձեռք բերված, որպէսզի իւրաքանչիւր վեց գծից մի-մի խոշոր գումար ստանան «для передачи»-ի գրելով։

Ապա աւելացնում է, որ ինքը, Սարուխանեանը մի քանի տասնեակ հազարներ է ծախսել քարտէզներ պատրաստելու, երկար ամիսներ մայրաքաղաքում նստել, ճանապարհները ուսումնասիրելու համար Եւլախից-Շուշի, Գանձակից Շուշի և Գորիսից Շուշի ճարտարապետական խմբեր ուղարկել, զանազան տեղեկութիւններ է ժողովել և հարիւրաւոր վաւերացված փաստաթղթեր է ձեռք բերել գործ անելու, այլ ոչ լուռ նստելու…

Այդ մանրամասնութիւնը լսելուց յետոյ մինիստրութիւնը իսկապէս տեսնում է, որ ինքը գործ է ունեցել ոչ թէ գործ կատարողների հետ, այլ կապիտալիստի անուան տակ թագնված շահախնդիրների հետ։ Ուստի յատուկ ժողով է գումարում այս տարվայ յունվարի 28-ին և իրաւունք ստացած Կրասնեանսկիի «ընկերութեանը» 6 ամիս ժամանակ է տալիս, որ մինչև այդ ժամանակի լրանալը անհրաժեշտ նախագծերը ներկայացնէ,—քարտէզը, կամուրջների, կայարանների և այլ նախագծերը, որոնց համար թէ ահագին ծախսեր էին հարկաւոր և թէ մի քանի ամիսների աշխատանք։ Եթէ այդ պարոնները մինչև 6 ամիս չը ներկայացնեն անհրաժեշտ թղթերը, զրկվում են ստացած իրաւունքից և իրաւունքը անցնում է Սարուխանեանին, որի բոլոր պրոեկտը վաղուց է պատրաստ և գտնվում է մինիստրութեան մօտ։ Միևնոյն ժամանակ մինիստրութեան մէջ մի յանձնախումբ է կազմվում 40 հոգուց բաղկացած, որոնք պիտի քննեն երկու կողմերի էլ ներկայացրած ծրագիրը։ Երբ ներկայ թւի փետրվարի սկզբին Սարուխանեանը վերադարձաւ տեղս, ամբողջ ծրագրից 40 պատճէններ ուղարկեց մինիստրութեան յանձնախմբի անդամներին բաժանելու համար, ինչպէս այդ որոշված էր և որ նոյնը պիտի անէին նախկին թոյլտուութիւն ստացողները՝ Կրասնեանսկիի ընկերութիւնը։

Այժմ, որքան մեզ յայտնի է, Կրասնեանսկին անցած 6 ամսվայ ընթացքում ոչ մի աշխատանք չէ ձեռնարկել Եւլախ-Շուշի ճանապարհի վրա, իսկ 6 ամիսը լրանում է այս ամսի 28-ին, հինգշաբթի օրը։

Մ. Մ. Սարուխանեանը ամսիս 10-ից արդէն գտնվում է Պետերբուրգում։

Այսպէս թէ այնպէս, շուշեցիք ամենակարճ ժամանակում կը տեսնեն իրանց փափագած երկաթուղին, նրանց համար միևնոյն է Սարուխանեանն է շինել թէ մի ուրիշը, միայն թէ գիծը կառուցվի։ Սակայն գիծը եթէ Սարուխանեանին մնայ, տեղացիք մեծամեծ նիւթական օգուտներ կը ստանան կառուցման գործում։ Երկրորդ՝ եթէ Սարուխանեանին մնայ, գիծը կանցնէ մինչև Դայբալու գիւղը, որը Շուշի քաղաքից ընդամենը կէս վերստ է հեռու, իսկ եթէ օտարի վրա մնայ կառուցման գործը, շուշեցիները շատ քիչ պիտի օգտվին, որովհետև վերջին կայանը Շուշուց 30 վերստ հեռու պիտի լինի, որովհետև օտարի ստացած իրաւունքը լայն գիծ է և, ինչպէս օտարական, տեղային հանգամանքին և դիրքից ոչ ծանօթ, սովորական թոյլտուութիւնն է ստացել առանց տեղացիների տնտեսական դրութիւնը մտնելու, յարմարութիւնը իմանալու։

Մեր հաւաքած տեղեկութիւններից իմանում ենք, որ եթէ Կրասնեանսկին կառուցանէ, համաձայն իր ձեռք բերած թոյլտուութեան, ծախքը կը լինի մինչև վեց միլիօն րուբլի, իսկ Սարուխանեանի ծրագրով երեք միլիօն 50,000 րուբլի։ Ով էլ շինելու լինի գիծը, պետական օրէնքի համաձայն, նա պարտաւոր է ընդհանուր ծախքի 75%-ը վաղօրօք ներկայացնել պետական գանձարանին, իսկ մնացեալ 25%-ը սկսէ ծախսել։ Երբ յիշեալ 25%-ը ծախսեց և ծախսերի փաստաթղթերը ներկայացրեց ճանապարհների հաղորդ. մինիստրի ներկայացուցչին, որը պիտի հսկէ կառուցվող գծին, այնուհետև կարող է աստիճանաբար գանձարան մտցրված 75%-ից ստանալ ու ծախսել։ Սարուխանեանի այդ գումարը արդէն պատրաստ է և կարող է հէնց վաղվանից սկսել, որի մի մասը միջազգային բանկի տեղւոյս բաժանմունքումն է, որը ժողովված է անցեալ տարի բաց թողնված ակցիաներից, և որը անձեռնմխելի մնում է, իսկ մնացեալը ապահովել է «Սարուխանով-Կուրինսկի ակց. ընկերութիւնը»։

Այստեղ անհամբեր սպասվում է ամսիս 28-ին։ Տեսնենք հեռագիրը ինչպիսի լուր կը բերի, որի մասին ժամանակին կը հաղորդեմ։

Ս. Գարագաշ

## ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

### Ծխական ժողովի որոշումները

Ցխինվալ, 23 յուլիսի

Ամսիս 21-ին կայացաւ ծխ. ժողով, խորհրդակցելու դպրոցական մի քանի հարցերի մասին։

Թէև նախընթաց օրը հոգաբարձութիւնը յայտնել էր հասարակութեանը՝ լինելիք ժողովի մասին, դուռ-դուռ շրջեցնելով տիրացու ինստիկանի ուղեկցութեամբ և 21-ին էլ եկեղեցու զանգահարութեամբ, բայց և այնպէս ժողովին՝ մօտ 200 տուն ունեցող Ցխինվալի հայ հասարակութիւնից՝ ներկայ էին միայն մօտ 40 հոգի, որոնց թւում, ի միջի այլոց, այստեղ ամառանոց եկած՝ տեղացի Յովհ. Տէր-Ստեփանեանցը, որը նախ համառօտակի բացատրեց ժողովականներին ուսման և կրթութեան նշանակութիւնը և ապա յայտնեց ժողովի նպատակը, որ է՝ 1) գտնել միջոցներ՝ դպրոցի 1910/11 ուսումն. տարվայ մօտ 190 ր. դեֆիցիտը ծածկելու, 2) միջոցներ՝ նորոգելու դպրոցական շէնքը, 3) համաձայն են ժողովականները դիմելու կօնսիստորիային՝ այրի Մարիամ Պապովեանցի մեր դպրոցին նուիրած 6,000 ր. դրամագլուխը Թիֆլիսի առևտրական բանկից փոխադրելու տեղական մանր վարկի ընկերութեան հաստատութիւնը. 4) հոգաբարձութիւնը դարձեալ մտադիր է դիմելու պետ. դիրեկցիային, եկեղեցական կալուածների գրաւումից մինչև այժմ մնացած, դպրոցի 400 ր. յետ ստանալու համար և 5) Յովհ. Տէր-Ստեփանեանցը ուզում է նուիրել դպրոցին իր հին շինութիւնը (դպրոցին կից է և շինութեան տեղն էլ պատկանում է դպրոցին) միայն այն պայմանով, որ չը քանդեն շինութիւնը և չը ծախեն, այլ վերանորոգեն։

Վերոյիշեալ կէտերի մասին ժողովը որոշեց. 1) Դեֆիցիտը ծածկելու համար անմիջապէս սկսել նուիրահաւաքման։ Հէնց տեղն ու տեղը ժողովականներից հաւաքվեց մօտ 70 ր.։ 2) Դպրոցի նորոգութեան համար մուրհակով պարտք վերցնել հասարակութեան ունևոր անդամներից մինչև հանգուցեալ Միք. Ղուլիջանեանցի (ցխինվալցի)՝ դպրոցին նուիրած 750 ր. ստանալը։ 3) 6,000 ր. փոխադրութեան համար դիմել Վրաստանի և Իմերէթի թեմի կօնսիստորիայի նախագահ Եփրեմ եպիսկոպոսին, 4) իսկ 400 ր. դիրեկցիայից յետ ստանալու համար՝ Կովկասի Փոխարքային, և ոչ թէ պետական դիրեկցիային, որին քանիցս դիմվել է, բայց ոչ մի պատասխան չէ ստացվել։ 5) Յովհ. Տէր-Ստեփանեանցին ժողովականները նուիրատւութեան համար յայտնեցին խորին շնորհակալութիւն։

Մեզանում առհասարակ ծխ. ժողովները շատ անկանոն են անցնում գլխաւորապէս այն պատճառով, որ թէ ժողովականները և թէ ժողովի նախաձեռնողները ամեն բանից առաջ չեն ձեռնարկում նախագահի և քարտուղարի ընտրութեան, որ ամենագլխաւորն է, աչքի առաջ չեն ունենում ժողովականների թիւը, քչով թէ շատով բաւականանալով։

Հմ. Օհանեանց

### Ուսուցչի արձակման հարցը

Մեղրի, 11 յուլիսի

Անցեալ 1910/11 ուսում. տարեվերջին Մեղրիի դպրոցի հոգաբարձութիւնը յայտնում է ամուսիններ ուսուցիչներին, որ նրանք առաջիկայ 1911/12 ուսում. տարվայ համար էլ մնում են ուսուցիչ։ Նրանք վճռում են ամառս ապրել Մեղրիի ամառանոցում։

Յուլիսի 7-ին հոգաբարձութիւնը, գրաւոր, պաշտօնապէս յայտնում է վարժուհի ամուսնուն, որ նա մնում է պաշտօնի մէջ, իսկ նրա ամուսին ուսուցիչը արձակվում է պաշտօնից, ինչ-որ ոչ-մանկավարժական հարցի պատճառով։

Ասում են, թէ հոգաբարձութիւնը մտադիր է արձակված ուսուցչի տեղ նորը հրաւիրել։ Հասարակութեան մէջ կան որոշ խաւեր, որոնք հաստատ մտադրել են թոյլ չը տալ, որ ուսուցիչը հեռացվի իր պաշտօնից։

Եփրեմ Վարդանեանց

### Խորհրդակցութիւն Պեատիգօրսկի բարեկարգման մասին

Պեատիգօրսկ, 18 յուլիսի

Ամսիս 16-ի երեկոյեան քաղ. տան մէջ խորհրդակցութիւն էր նշանակված՝ քննելու այն հանգամանքները, որոնց շնորհիւ Պեատիգօրսկը վերջին տարիներս յետ է գնում, և ստեղծելու պայմաններ՝ բարձրացնելու, որպէսզի ամենքը ձգտեն գալ և կանոնաւոր ստանալ բնութեան ընձեռած բժշկութիւնը։ Առանձին յայտարարութեամբ խորհրդակցութեան հրաւիրված էին բոլոր բժիշկները, տնատէրերը։

Հաւաքված բազմութեան մէջ էին հանքային ջրերի տեսուչը, պրոֆէսօրներ Սուբբոտին և Կուզմին ու բազմաթիւ բժիշկներ և տնատէրեր։

Ճառախօսները տեղիս պակասութիւններն էին երևան հանում, օրինակ՝ տների թանգ լինելը, ջրի պակասութիւնը, փողոցների փոշին և ոչ մաքուր լինելը, մթերքի համեմատաբար թանգ լինելը, տների ամառանոցային պահանջներին ոչ համապատասխան լինելը, կանալիզացիայի բացակայութիւնը, որի պատճառով տակառներով է դուրս տարվում աղբը։ Այս բոլորի վրա աւելանում է այն, որ մօտ 100 տարի դրսից հիւանդներ ընդունող կուրօրտ համարվող Պեատիգօրսկն առաջին անգամն է լրջութեամբ այդ մասին կենտրոնանում

Մի քանիսը այս կուրօրտը այցելողների քչանալը վերագրում են և բժիշկների անտարբերութեան, անհոգութեան՝ աչքի առաջ ունենալով Եսէնտուկիի բժիշկների յատկապէս տեղական պայմանները բարելաւելու համար ունեցած եռանդը և այն հոգացողութիւնը, որ նրանք գործադրում են հաւաքական ույժերով՝ այցելողների թիւը աւելացնելու նպատակով։ Ոչ պակաս աշխատում են Կիսլովոդսկի ու Ժելեզնովոդսկի թէ բնակչութիւնը և թէ յատկապէս բժիշկները։ Աւելանում են նրանց եկւորների թիւը, իսկ մեր տեղինը մեր անհոգութեամբ պակասում։

Պրոֆէսօր Կուզմին շեշտելով մի շարք աննպաստ պայմանները՝ առաջարկում է վերացնել և այնուհետև ցոյց տալիս ցեխաբուժարանի Ալէքսանդրեան պլացում շինվելու վնասակարութիւնը, բացասական կողմերը, բացատրելով որ քաղաքի այդ մասը ջերմ ու տենդոտ է և կամովին մենք բժշկվող հիւանդներին ենթարկում ենք նորը ստանալու վտանգին։ 20—25 տարով տեղում բժշկականութեամբ պարապողները այդ երկիւղը ցրելով՝ վտանգի երևակայական լինելն էին ապացուցանում։

Նախագահը որքան և ճառախօսներին օրակարգը յիշեցնելով աշխատում էր հարցերը ջոկ-ջոկ քննութեան տալ, բայց և բոլորը սերտ կապակցված լինելով հնար չէր լինում բաժանել։ Բարելաւելուն համար առաջարկված միջոցներից էին. որ գոյութիւն ունեցող և այժմ դադարած ընդհանուր բժշկական խորհրդակցութիւնները հանքային ջրերի տեսչի նախագահութեամբ դարձեալ տեղի ունենան, որ կազմակերպվի մի առանձին կօմիսիա, ուր կը մտնեն քաղաքային վարչութիւնից, բժիշկներից, ջրերի վարչութիւնից և տնատէրերից մարդիկ, որի հոգացողութիւնը կը լինի բարձրացնել Պեատիգօրսկը որպէս կուրօրտ, որին բնութիւնը այնքան բուժիչ յատկութիւններ է տուել և սակայն նա կտրված է, և քչերն են օգտվում։ Անհրաժեշտ է ունենալ կուրզալ և պարկ։ Սրանց տեղի վերաբերմամբ մատնանշվեցին 4 տեղեր և մասնաւորապէս կանգ առան երկու տեղի վրա՝ Էմմանուէլեան պարկի և «Կալիօնի սադ» այգու։ Երկու տեղի վերաբերմամբ էլ տեղին առարկութիւններ եղան։ Միւս առաջարկված տեղերը փոքր են կամ ունեն աւելի անյարմարութիւններ։ Քաղաքին մնում է նոր ազատ հող պատրաստել, թէկուզ մի քանի տնատեղեր գնելով, և այդ՝ անպայման քաղաքի ներքին մասում, օրինակ՝ քաղաքային տնից վար կամ նրա շրջակայքի մօտերքը։

Ժողովականները մեծ բաւականութեամբ լսում էին պրոֆէսօր Սուբբոտինի, և ջրերի տեսչի բացատրութիւնները զանազան խնդիրների վերաբերութեամբ և խորհուրդները, բժիշկներ պ. պ. Բժակսեռսկիի և Պրինեաչեւսկիի։ Ժողովականները գոհ այն հանգամանքից, որ քաղաքի բարելաւութեան լուրջ խորհրդածութեան սկիզբը այս օրվանով դրվեց, ցրվեցին արդէն բաւական ուշ լինելուն պատճառով։ Մարգ.

### Մի նմուշ գիւղական դատավարութեան

Ծօծկան (Բորչ. գաւ.), 17 յուլիսի

Շուշու բնակիչ որբ ու անտէր Ներսէս Նարուեանցը, 13 տարեկան, մի կտոր հաց գտնելու նպատակով, պանդխտում է և հասնելով Ծօծկան՝ ծառայութեան մտնում տեղացի Կ. Խուդինեանցի մօտ։ Մնալով նրա մօտ 1½ տարի առանց մի կոպէկ անգամ ստանալու, որբը առանց որևէ պատճառի փողոց է շպրտվում։ Խեղճ պատանին իր միակ յոյսը հաշտարար միջնորդի վրա էր դրել և այդ եղելութեան մասին խնդիր ներկայացրել, խնդրելով իրան օգնական հանդիսանալ։ Ի հետևանս այդ խնդրագրի Բօրչալուի II մասի հաշտարար միջնորդը առաջարկում է Ծօծկանի դատաւորներին քննել որբի գործը և տալ նրան արդարացի բաւարարութիւն, 1½ տարվայ ծառայութեան համար առնուազն 54 րուբլի։

Այս գործի քննութեան համար ամսիս 17-ին գիւղական դատարան էին հաւաքվել դատաւորները։ Որբը կուչ էր եկել դատարանի մի անկիւնում և չէր համարձակվում խօսք անգամ արտասանել։

Գործի իբր քննութիւնը տևեց մէկ ժամ, որից յետոյ դատաւորները որոշեցին մանկանը տալ ոչ աւել քան 9 ր.։

Մանուկը, տեսնելով այդ անարդար վճիռը, չը համաձայնվեց և մերժեց վերցնել նաև փող ու լացակումած դուրս գնաց դատարանից։ Դատաւորները զգուշացրին նրան, որ նա կը զրկվի թէ փողից և թէ կը հեռացվի գիւղից։

Կայծօն Շքեղեանց

### Եղանակներն ու բերքը

Ղովախչօլ (Զաքաթ. շրջ.), 22 յուլիսի

Մեզանում մէկ ամիս է, ինչ անձրև չէ եկել։ Անտանելի շոգեր են անում։ համարեա բոլոր արտերը և արօտը չորացել են։ Եթէ մի շաբաթ էլ այսպէս շարունակվի, անասունները ձմեռը սովամահ կը լինեն։

Ազգաբնակութիւնը յուսահատ դրութեան մէջ է։

Այրող ճառագայթները ոչնչացրել են աշխատաւոր շինականի դառն քրտինքի արդիւնքը։

Ցորենի բերքը միջակ լինելու պատճառով խեղճ գիւղացին միակ յոյսը դրել էր սիսեռ-մնդրի վրա, որն այս տարի այստեղ մեծ քանակութեամբ էին ցանել, բայց դա էլ փչանում է արևի այրող ճառագայթներից։

Այստեղից ամեն տարի մեծ քանակութեամբ միրգ էին տանում Թիֆլիս վաճառելու, բայց դժբաղդաբար դա էլ արգելված է այս տարի՝ Թիֆլիսի նահանգում եղջերաւոր անասունների ժանտախտ լինելու պատճառով։ Նիկ. Յարութիւնեան

### Մեր կեանքի անլուծելի հարցերից մէկը

Խանքենդ-աւան, 22 յուլիսի

1909 թ. խանքենդեցի Վալօդեան պսակվեց մի օրիորդի հետ։ Մի քանի ամսից յետոյ երկուսի մէջ ծագեց չնչին վէճ։

Մի օր դրանց կռւին պատահում է տղայի զոքանչը։ Սա միջամտում է կռւին և փեսայի կողմից արժանանում է պարգևի…

Զօքանչը սաստիկ վիրաւորված, դստեր կանից բռնած դուրս է գալիս տանից, այլ ևս թոյլ չը տալով իր աղջկան գնալ իր ամուսնու մօտ. այդ իսկ մի քանի ամսից յետոյ նորահարսին յանձնում է Երևանի կօնսիստօրիայի անդամ Անդրանիկ քահանային, որ սա իր տունը ծառայեցնէ…

Վալօղեան այդ անիրաւութեան և ապօրինութեան դէմ բողոքում է Ղարաբաղի կօնսիստօրիային և խնդրում, որ իր կնոջը վերադարձնեն և իրան յանձնեն։

Ղարաբաղի կօնսիստօրիան բացատրութիւն է պահանջում Երևանի կօնսիստօրիայի միջոցով գործի հանգամանքի մասին։ Ոչ մի բացատրութիւն։ Վալօղեան շարունակ գնում գալիս է կօնսիստօրիա, բայց ոչ մի պատասխան։ Անցնում է 8 ամիս և դեռ բացատրութիւն չը կայ և Վալօղեան յուսահատված, որ իր կողակիցը այլ ևս դառնալու չէ և հոգևոր իշխանութիւնից ինքը բաւականութիւն չէ ստանալու, քաղաքացիական կարգով բերել է իրան համար կին։

Այժմ ինչպէս պիտի լուծել այս խնդիրը. մեղաւոր է Վալօղեան ապօրինի կին պահելու համար, թէ ոչ և որքան արդար, Երևանի կօնսիստօրիան և նրա անդամ Անդրանիկ քահանան ութ ամիս պատասխան չը տալու համար։

Ա. Ա.

## ՌՈՃԻԿԱՒՈՐ ԵՐԷՑՓՈԽ

Ախալցխայում ս. Փրկիչ եկեղեցու համար երէցփոխ է ընտրվում բացառիկ պայմաններում, և այդպիսի պայմաններ գոյութիւն չունեն ոչ միայն Ախալցխայի միւս եկեղեցիների երէցփոխների վերաբերմամբ, այլ նաև բոլոր հայ եկեղեցիների, ուր էլ նրանք գոյութիւն ունենան։

Երէցփոխի պատուաւոր և անվարձ կատարվող պաշտօնը տեղիս ս. Փրկչի եկեղեցու վերաբերմամբ դառել է ռոճիկաւոր մի պաշտօն մեր եկեղեցիների կալուածները վերադարձվելուց և ծխ. ուսումնարանները վերաբացվելուց յետոյ։

Չը գիտեմ ախալցխացիների պատուի թէ անպատուութեան համար է, որ ծնունդ է առած այն գաղափարը, թէ լաւ է ունենալ ռոճիկաւոր և հաւատարիմ երէցփոխ, քան անռոճիկ և եկեղեցու դրամները վատնող մինը։ Բայց որ այդ տեսակէտը սխալ է և անհիմն, դա պարզ է, որովհետև Ախալցխայում եղած են անխարդախ և եկեղեցու շահերին նուիրված անռոճիկ երէցփոխներ, ինչպէս նաև եղել է այնպիսին, որ ռոճիկ ստանալով հանդերձ մեծ գումարներ վատնած է։ Բացի դրանից՝ ռոճիկ տալը մի սովորութիւն կը դառնայ և խախտելով ծխ. կանօնադրութեան ոգին՝ կարող է վարակել նաև ուրիշներին և այդպիսով երէցփոխական պատուաւոր կոչումը կը վերածվի վարձու պաշտօնի։

Բայց ախալցխացիներն այդ ամենը ծածկելու համար՝ մի միջոց են հնարել, մի պարզամիտ և երեխաներին խաբող սրամտութիւն՝ երէցփոխին յատկացված 600 ր. գումարը ոչ թէ ռոճիկ, այլ «երէցփոխի դիւանական ծախս» անուանելով։

Նկատի պէտք է ունենալ նախ՝ որ նոյն եկեղեցու հոգաբարձութիւնը բացի այդ երէցփոխի «դիւանական ծախս» անուանվող 600-ից՝ ունի իր առանձին դիւանական ծախսը, որը նոյնպէս մտնում է եկեղեցու նախահաշւի մէջ, մինչդեռ՝ ժամանակաւոր կանօնադրութեամբ եկեղեցու գործերը և առհասարակ ամբողջ գործը երկու անջատ մարմիններ չեն կառավարում, այլ միմիայն մինը, այն է՝ ծխ. հոգաբարձութիւնը, կազմված՝ երէցփոխից և չորս անդամներից։ Պարզ է ուրեմն, որ երէցփոխին վճարվածը ոչ թէ դիւանական ծախս է, այլ իսկական ռոճիկ, որովհետև եթէ դիւանական ծախս լինէր, նախ հոգաբարձական էլ առանձին չէր լինի և յետոյ՝ այդ դէպքում երէցփոխը պարտաւոր էր մանրամասն հաշիւ տալ իր արած ծախսերին, մինչ այդպիսի բան գոյութիւն չունի և յայտնի չէ, թէ երէցփոխն այդ դրամն ինչպէս է գործածում։

Ինչպէս յայտնի է, ծխ. ժողովների որոշումները ենթարկվում են թեմ. առաջնորդի հայեցողութեան, և նախ քան նրանից հաստատվելը՝ չեն կարող այդ որոշումները գործադրվել։

Այստեղ ուրեմն մի հարց է առաջ գալիս. Թիֆլիսի թեմ. առաջնորդը մի՞թէ հաստատած է Ախալցխայի վերաբերմամբ ռոճիկաւոր երէցփոխութիւնը։

Սրա պատասխանը, ինչպէս առհասարակ բոլոր այն հարցերի պատասխանը, որոնք կապված են մեր հոգևոր կառավարութեան հետ, ամենքիս համար պարզ է և աւելորդ է մի անգամ էլ յիշել։ Արձանագրենք միայն փաստը՝ որ վերջերս նորից Ախալցխայում ռոճիկաւոր երէցփոխի ընտրութեան որոշում եղաւ, որը երևի կը գործադրվի, անկախ այն բանից՝ թէ ծխ. ժողովի մի այդպիսի որոշում օրինակա՞ն է թէ ոչ։

Ախալցխա — Գ. Արարեանց

## ՀՈՂԱՅԻՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Մեր նախընթաց յօդուածով (№ 146 «Մշակ») ցոյց տուինք մի քանի կէտեր հողային յարաբերութիւնների մասին մեզանում։ Այժմ անցնենք հողահասոյթների ձևերին, չափին և համեմատական քանակութեան՝ նախկին և այժմեան պայմաններում։

Ծիշդ 80 տարի սրանից առաջ, 1828—30 թւականների գաղթականութեան սկզբնական տարիներում կամ քաղաքիս հիմնարկութեան ժամանակում, գաղթականութեան բնակչութիւնը շատ աննշան թիւ է ունեցել, այն է 300—350 ընտանիք, որոնք 15 տարի անցնելուց յետոյ՝ 1844 թ.—հասել են 430 ընտանիքի 2973 բնակչութեամբ, երկու սեռից բաղկացած։ Այն ինչ այժմ քաղաքիս ազգաբնակութիւնը հասել է 1600 ընտանիքի 10,433 հոգի երկու սեռի անդամներով։ Բայց չը նայելով ազգաբնակութեան այս պատկառելի աճեցողութեան, այնուամենայնիւ հասարակական հողաբաժինները, որոնց տրվել է ժողովուրդը սկզբի տարիներում, շատ քիչ բացառութեամբ՝ մնում է նոյնը։ Քիչ բացառութեամբ ենք ասում, քանի որ տարիների ընթացքում հողաբաժինների փոքրիկ մասեր հարևան հայ և թուրք գիւղերից անցել են տեղական բնակչութեան ձեռքը։ Նոյնիսկ 1877—78 թ. թ. ռուս-թիւրքական պատերազմից յետոյ, երբ գաղթական ժողովրդի մի հատուած հիմք դրեց մեզ մօտ, մի կտոր հողաբաժին*) յատկացվեց քաղաքին, որպէսզի դրանով բաւականութիւն տրվի նոր գաղթականներին (30 տ.)։

Սկզբի տարիներում հողաբաժնութիւնը հաւասարաչափ չէր բաժանվում շնչի վրա այժմեան հաշւով, այլ ով ինչքան պահանջ ունէր, ինչքան կարող էր մշակել, այքան հողաբաժիններ էր ստանում։ Օրինակ՝ մէկը մեծ հողագործ էր կամ պարապում էր զուտ հողագործութեամբ, նրան տրվում էր մեծ տարածութեամբ հողաբաժին։ Ուրիշ խօսքով՝ հողը տրվում էր բացառապէս նրանց, որոնք պարապում էին միմիայն երկրագործութեամբ։ Իսկ ով որ վաճառական էր կամ արհեստաւոր և անկարող հող մշակելու, նրանք շատ քիչ էին հետաքրքրվում հողահասոյթներով, մանաւանդ որ հողային արդիւնքները՝ թէ հացահատիկները և թէ խոտ ու դարմանը՝ չնչին արժէք ունէին։ Կային ընտանիքներ, որոնց տրված էր այնքան հողաբաժին, ուրով բաւականութիւն տրվէր միայն նրանց մի-երկու կովերին կերակրելու համար խոտ ու դարման ունենալու տարեկան։ Մինչդեռ այժմ թէ վաճառական, թէ արհեստաւոր, թէ աստիճանաւոր, թէ հոգևորական և թէ միւս դասակարգերը, բոլորը անխտիր շնչի համաձայն՝ ունեն իրանց հողահասոյթները հաւասարաչափ։

Այդպիսով ուրեմն առաջներում մեզանում հողաբաժինները բաժանված էին թէ անհաւասար կերպով—այսինքն մէկին շատ, միւսին քիչ—և թէ ըստ մշակութեան, այն է մեծ հողագործներին յատկացված էին ընդարձակ տարածութեամբ հողամասեր զանազան տեսակներից (լաւ, պարարտ, միջակ յատկութեամբ և այլն), իսկ փոքր հողագործներին՝ սահմանափակ տարածութեամբ, և կարելի է ասել, ստոր տեսակի հողամասեր։ Մի խօսքով՝ առաջներում, երբ հողը շատ էր, իսկ ժողովուրդը քիչ, բաւականաչափ հողաբաժիններ ունէին հողագործները առհասարակ, իսկ այժմ գրեթէ թզով են չափում ու տալիս հողը, որի պահանջը այնքան զգալի է, որ գլուխ են պատռում հողահասոյթների համար։

Սակայն աւելի հետաքրքրական է 60-ական թւականների շրջանը. այդ տարիներում, երբ աւելի պահանջ զգացվեց հողահասոյթների վերաբերմամբ, տեղի ունեցաւ «համփա-պճեղի» սիստեմը։ Այն ընտանիքը, որ ունէր 4—5 զոյգ լծկաններ, համարվում էր «համփա», այսինքն առաջին կատեգօրիայի հողագործ, որն ստանում էր 100 չվան կամ 16—17 դեսեատին հողամաս։ Իսկ նրանք, որոնք 2—3 զոյգ լծկաններ ունէին, դրանք հաշւվում էին «պճեղ», այն է երկրորդ կատեգօրիայի հողագործներ (համփայի կէս մասի հաշւով) և ստանում էին հողահասոյթ 50 չվան *), թէկուզ նրանց ընտանիքների թիւը հաւասար քանակութիւն ունենային, այդ միևնոյն էր։

Ուրիշ խօսքով ասած՝ նախկին տարիներում մեր քաղաքի մի բուռն ժողովուրդը (430 տ. 2973 հոգով) օգտվել է նոյն հողերի տարածութեամբ, ինչ որ այժմս է, իսկ հողամասերը կազմում են մօտ 6,000 դեսեատին վարելահող և քաղատեղ ու նոյնքան էլ (մի քիչ պակաս) արօտներ, որոնցից դարձեալ օգտվում է այժմեան ժողովուրդը, որի թիւը աճել և հասել է 10,433 հոգու (1,600 տ.)։ Մի կողմ թողնելով արօտատեղերը, որոնք և ոչ մի ժամանակ չեն բաժանվել հողային ընտանիքների վրա առանձնապէս, պէտք է ասել, որ առաջներում, եթէ ընդունելու լինենք միջին թիւը, մեր քաղաքի հողագործներից իւրաքանչիւր անդամը հողահասոյթ ունէր մօտ 2 դեսեատին։ Այն ինչ՝ այժմ այդ չափը չէ անցնում իւրաքանչիւր անդամի (նաֆար) համար կէս դեսեատինից **) (6,000 դեսեատին 10,433 շնչի դէմ)։

Սակայն անցան տարիները և «համփա-փճեղի» սիստեմն էլ ջուրն ընկաւ, քանի որ մարդիկ գիտակցութեան գալով և հողի պահանջը աւելի զգալի դառնալով՝ սկսեցին հողաբաժնութեան վրա լուրջ ուշադրութիւն դարձնել։ Այնպէս որ՝ ժողովրդի հողզուրկ մասը զգաստանալով՝ պահանջեց հողահասոյթների կանօնաւորումն և հաւասարապէս բաժանումն՝ շնչի համաձայն։ Եւ ահա 80-ական թւականներից սկսած արդէն հողաբաժնութիւնը կամաց-կամաց վերածվեց «նաֆարի» հաշւով, այսինքն շնչի համաձայն. ով շատ անդամներ ունէր՝ շատ հողամաս էր ստանում, իսկ ով քիչ ընտանիքի տէր էր՝ քիչ քանակութեամբ մշակում կամ տիրում։ Եւ այդ սիստեմը մինչև այժմ էլ գոյութիւն ունի մեզանում, և, պէտք է ասել, արդարապէս բաժանագրվում է հողը ըստ քանակութեան ընտրողական անդամների՝ աւելի կանօնաւոր հիմունքներով, քան առաջ էր, երբ ժողովրդի աչքը խուփ լինելով՝ շատ ընտանիքներ շահագործվում էին հողահասոյթների վերաբերմամբ և մեծապէս տուժում…

Աւելացնենք և այն, որ այժմեան հողաբաժնութիւնը թէպէտ ունի իր արդար ֆունկցիաները, բայց և այնպէս նուազ ձեռնտու է մեծ ռաշպարների համար, որոնք քչւոր (սակաւաթիւ) ընտանիք կազմելով քիչ էլ հողաբաժին են ստանում, հետևապէս իրանց հողային պակասը լրացնելու համար՝ ստիպված են կամ կապալով վերցնել ուրիշներից, կամ կիսովի ցանել և կամ սահմանափակվել իրանց աննշան հողահասոյթներով։ Մինչդեռ մեծաթիւ ընտանիքը բաւականաչափ հողամասեր գրաւելով թէ ցանում է, կապալով տալիս և թէ թողնում հանգստանալու։

Գ. Սինանեան

Նոր-Բայազէտ, 18 յուլիսի

---

*) «Ուչուխլուլու» կոչված հողամասը, որի մասին կը գրեմ յետագայում։

*) Տեղական հողային ընդհանուր չափն է՝ 400 քառակուսի սաժէն տարածութեամբ։

**) Վերջին հողաբաժնութիւնը, որ կատարվեց անցեալ 1910 թ., տուեց ճիշդ կէս դեսեատին հաշւով իւրաքանչիւրին, կամ տեղական չափով՝ 3 չվան, որի 6 չվանը մի դեսեատին է (2,400 ս.) Գ. Ս.

---

## ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

—o—

Անցեալ հայրապետական ընտրութեան միջոցին պատիւ ունէի իբր Պարսկա-Հնդկաստանի թեմի պատգամաւոր մասնակցել Էջմիածնում կատարված խորհրդակցութեանց և վերջին ընտրողական գործերին։ Անցած երկու տարին ևս թիւրքահայերի հետ թէ Պօլիս և թէ այլուր անընդհատ շփման մէջ եմ եղած և հայ թերթերի յօդուածներին այս նիւթի վրա ի մօտոյ հետևել եմ։

Ուրեմն, կարծում եմ, երբ մեր ազգային հաստատուններին ծանօթ մէկը, իրաւունք ունիմ ձեր միջոցով ինչ-ինչ բացատրութիւններ խնդրել և առաջիկայ ընտրութեան մասին իմ կարծիքները յայտնել։ Պատմութիւնից գիտենք, թէ Նոր-Ջուղան նախառուսական շրջանում առաջին և ամենակարևոր ձայնն ունէր Էջմիածնի գործերի մէջ, տիրող օրէնքն ևս Պարսկա-Հնդկաստանի պատգամաւորին կրտսերագոյն կարգելով քառանուն ցանկի պատրաստութեան և վերջին քուէարկութեան մէջ առաջնութեան ձայնը այս թեմին է վերապահել։

Իմ պարտականութիւնն եմ համարում իմ յաջորդի բանելիք դիրքն որոշելու համար հարց յարուցանել, թէ արդեօք տիրող օրէնքի համեմատ մէկ վարդապետ կամ ծայրագոյն վարդապետ կարո՞ղ է կաթողիկոսական թեկնածու առաջարկվել թէ ոչ։

Վերջին ընտրութեանց միջոցին ռուսահայ փաստաբանների կարծիքները անորոշ էին և երկար վիճելուց յետոյ խորհուրդ տուին մեզ միայն եպիսկոպոսներից ընտրել, կասկածելով որ մի գուցէ օրէնսգիտական բծախնդրութեան պատճառով բոլոր ընտրութիւնը վտանգի հանդիպէ։

Ի հարկէ, երբ պատգամաւորներն Էջմիածին են հաւաքված, անկարելի է վիճելի ծանրակշիռ նիւթերի վրա գոհացուցիչ, հիմնաւոր և ուրեմն լուրջ պատասխան ստանալ։

Բայց եթէ այժմեանից դիմվի ուր որ անկ է, կարող է պատահել, որ անցեալ անգամվայ պատասխանը փոխվի և մեզ աւելի լայն ասպարէզ շնորհվի մեր քառանուն ցուցակի կատարման համար։

Գիտեմ որ հրապարակագրութեանց մէջ այս մասին ամեն տեսակ գաղափարներ յայտնել են, և գիտեմ որ պաշտօնական մարմինները աւելի պիտի շահագրգռվէին այս հարցով, բայց պատճառներ էլ կան նրանց Ջաքարէական պապանձման համար, իսկ իմ թեմի պատգամաւորին կընկնէ բոլոր հայութեան առջև կանգնել և հայ կղերականների միջից առաջին չորս անուններ առաջարկել իբր Լուսաւորչի արժանաւոր յաջորդի։

Երկրորդ՝ արդեօք ընդունված օրէնքին համեմատ ընտրողներ և թեկնածուներ պէտք է ա) անհրաժեշտ հայ-լուսաւորչական եկեղեցու անդամ լինեն թէ ոչ. բ) ի ծնէ անդամ թէ դաւանափոխութեամբ անդամներ ևս ընդունելի են. մէկ պարսիկ կամ թիւրք եթէ լուսաւորչական մկրտվի՝ կարո՞ղ է նա ընտրող և ընտրելի լինել, խզելով կամ պահելով հանդերձ իր կապերն իր գերդաստանի այլադաւան անդամների հետ։

Երրորդ՝ հանգուցեալ Իզմիրլեան սրբազանի յարատև և մահաբեր հիւանդութիւնը կամաւ և գիտակցօրէն պատգամաւորներից զաղտնի պահելուց յետոյ ներելի է մեզ արդեօք ստիպել, որ անպայման բժշկական մասնախմբի կողմից առողջութեան վկայական ներկայացնեն ամեն կանդիդատի համար։

Չորրորդ՝ տարիքի մասին որոշ ուղեցոյց ունե՞նք թէ ոչ. 20-ից մինչև 120 որքան երիտասարդ և որքան զառամեալ մահամերձ լինեն, անխտիր ընտրելի են թէ վերջապէս որոշ սահման պէտք է ընդունել ամեն երկու երեք տարի կաթողիկոս ընտրելու, օծելու և թաղելու ծանր պաշտօնից զերծ մնալու։

Պրոֆ. դօքտ. Բագիլ

Թէհրան

## ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Կովկասի Փոխարքայի պաշտօնակատար ինֆանտերիայի գեներալ Ն. Շատիլովը յուլիսի 26-ին մեկնեց Վլադիկավկազ՝ ներկայ լինելու թնդանօթաձիգ զօրքի մանեօվրներին։ Նրան ուղեկցում է շրջանի զինւորական շտաբի գլխաւորի պաշտօնակատար գեն.-մայոր Ն. Իւդենիչը։ Փոխարքայի պաշտօնակատարը Թիֆլիս կը վերադառնայ յուլիսի 28-ի, երեկոյեան։

◆ Արասթումանից Թիֆլիս վերադարձաւ Թիֆլիսի քաղաքագլուխ Ա. Խատիսեանը։

◆ Թիֆլիսի թեմի առաջնորդի պաշտօնակատար Եփրեմ եպիսկոպոսը մեկնեց Սանահնի վանքը։

◆ Մեզ խնդրում են տպել հետևեալը. «Առաջիկայ սեպտեմբերի 20-ից Մոսկվայի խմբապետական դասընթացներին կից բացվելու է նաև հայկական բաժանմունք հայ-լուսաւորչական խմբապետների և երգեցողութեան ուսուցիչների համար, որի ծրագիրը համապատասխանում է Պետերբուրգի պալատական երաժշտական ճեմարանի ծրագրին։ Դասընթացներն աւարտողները ստանալու են պատշաճաւոր վկայականներ՝ խմբապետի և երգեցողութեան ուսուցչի կոչում։ Դասընթացներում աւանդելու են կօնսերվատօրիայի, սինօդալնի դպրոցի ուսուցիչները և պրօֆեսօրները։ Հայկական բաժանմունքը ղեկավարելու համար հրաւիրված է երաժիշտ-երգահան Եղիշէ Բաղդասարեանը։ Մանրամասնութիւնների համար դիմել՝ г. Москва, Арбатъ, д. № 4. „Регентск. курсы", վերատեսուչ՝ պրօֆ. Բագումել Րէշկէ։ Աջող ձայն ունեցողները կարող են մասնակցել Մոսկվայի հայոց եկեղեցական երգեցիկ խմբում որոշ վարձատրութեամբ»։

◆ Երևանի նահանգի դաշտային մասի ճանապարհորդութիւնից Թիֆլիս վերադարձաւ գիւղատնտես Ա. Աթանասեան, որ բերել է իր հետ այդ շրջանին յատուկ ցորենների հարուստ ժողովածու։ Մօտ օրերում Ա. Աթանասեան նոյն նպատակով ուղևորվելու է Երևանի նահանգի լեռնային շրջանը, ուր հունձը դեռ նոր է սկսվում. համաձայն այդ ուսումնասիրութեան, հացի բերքը այս տարի Էջմիածնի գաւառում շատ լաւ է, Սուրմալուում միջակ, Երևանի գաւառում՝ լաւ, Նախիջևանի գաւառում՝ թոյլ։ Լեռնային շրջանի բերքը դեռ ևս պարզված չէ։

◆ Շնորհիւ քաղաքի նոր բաժանումների, քաղաքային ընտրութիւնների առիթով ցուցակներ կազմող մասնաժողովի աշխատանքները բաւական բարդ են և կարիք է զգացվում անընդհատ աշխատանքների. այդ պատճառով էլ ցուցակներ քննող և այն վաւերացնող մասնաժողովը հարկադրված է ամեն օր շարունակական նիստեր գումարել շուտափոյթ կերպով գործերը առաջ տանելու համար։ Նախկին տարիների հետ համեմատած այս քառամեակի ընտրողների թիւը աւելացել է 2000 հոգով։ Նախորդ ընտրութիւններին նրանց թիւը հասնում էր 6000-ի, իսկ այս տարի հաւասարվում է 8000-ի, որոնց թւում հաշւած բոլոր ընտրողներին, առանց հանելու ապառիկ ունեցողների թիւը։ Բայց մի ուրախալի երևոյթ, որ նկատվում է այժմ, այդ այն է, որ ընտրողները աւելի գիտակից են վերաբերվում իրանց քաղաքացիական պարտականութիւններին։ Դրան ապացոյց կարող է ծառայել այն, որ մինչև այժմ ապառիկներ չունեցող ընտրողների թիւը 53% է, այսինքն ընտրողների թիւը այս քառամեակի ընտրութիւններին կը հասնէ մօտաւորապէս 5000-ի։ Յոյս կայ, որ մինչև տուեալ ժամանակամիջոցը դեռ ևս շատերը կը շտապեն գնահատական տուրքերի ապառիկները վճարել, ձայնից չը զրկվելու համար։

◆ Խուզարկու ոստիկանութեան պետ Գազիևը տեղեկութիւն ստանալով, որ Մուշտայիդ այգում թագնվում են զանազան յանցագործ տարրեր, որոնք մեղադրվում են այլևայլ յանցանքների մէջ, յուլիսի 24-ին, առաւօտեան ժամը 3 և կէսին շրջապատեց ոստիկանական պահակախմբով Մուշտայիդ այգին և ձերբակալեց ծառերի տակ և զանազան մութ խորշերում գիշերող մի քանի մարդկանց, առանց որոշ պարապմունքների և անցագրերի։ Սրանք բոլորն էլ զբաղվում էին գողութիւններով և թալաններով, մանաւանդ գիշերները։

◆ Հաղորդակցութեան մինիստրութիւնը վճռել է շարունակել ուղղակի հաղորդակցութիւնը Պետերբուրգ-Ռոստով-Թիֆլիսի միջև։ Արագ գնացքներում մտադրութիւն կայ կրճատել կօնդուկտօրական բրիգադայի քանակը և ստուարացնել գնացքի սպասաւորների թիւը։ Մտադրութիւն կայ նմանապէս վերացնել զանգահարութիւնը գնացքների մեկնման միջոցին և այդ փոխարինել սուլիչներով, եւրոպական երկիրների օրինակով։

◆ Կախէթի երկաթուղագծի կառուցման գլխաւոր ինժեներ է նշանակված Բացինբօրսկին, իսկ ադնուականութեան կողմից իբրև օգնական կը լինի ինժ. Գ. Թումանովը։

◆ Թիֆլիսի նահանգապետը տեղեկացրեց քաղաքային վարչութեանը, որ նրա կողմից ոչ մի արգելք չը կայ հրապարակելու ընտրողների ցուցակները. սրա հետ միաժամանակ նահանգապետը առաջարկեց կախել այդ ցուցակները ոստիկանատներում և առհասարակ պաշտօնական հաստատութիւններում, այլև կարգադրեց, որ ցուցակները ձրիաբար տրվեն բոլոր ընտրողներին, իսկ նրանց գտնվելու վայրերի մասին յայտարարութիւններ փակցվեն փողոցներում։

◆ Վրաստանի էկզարխը հաղորդեց Թիֆլիսի նահանգապետին, որ նրա կողմից արգելք չի ներկայանում, որպէսզի Թիֆլիսի բնակչուհի Կ. Ն. Դացենկօն ուղղափառութիւնից անցնէ հայ-լուսաւորչական եկեղեցու ծոցը, հաստատ մնալով իր նախկին խօսքին, չը նայած հոգևոր հովւի համոզումներին։

◆ Ֆինլանդիայի գեներալ-նահանգապետը մինիստրական խորհրդի հայեցողութեանն ուղարկեց ֆինլանդական սէյմի մի խնդրագիրը, որը վերաբերում է մայրութեան ապահովագրմանը, այսինքն նպատակ ունի ապահովել չքաւոր մայրերի նիւթական վիճակը։

◆ Թիֆլիսի ոստիկանութիւնը յուլիսի 1—15-ը հաւաքել է ապառիկ մնացած 20,036 ր. 41 կ. գնահատական տուրք և ձիերի համար ստացվող 268 ր. 87 կ. ապառիկ տուրքը։

◆ Նիկօլայեվեան երկաթուղագծի վարչութիւնը հրահանգ է ստացել ծառայութեան ընդունել այսուհետև միայն ռուսական ծագում ունեցող մարդկանց։

◆ Քաղաքային վարչութեան անդամ Գ. Ժուրուլին առաջարկեց քաղաքային գրատան համար վարձել Գրիբօեդօվսկայա փողոցի վրա գտնվող Թունիբէգօվի տունը։ Այդ նպատակով տունը քննութեան առնվեց վարչութեան անդամների և քաղաքային ճարտարապետների կողմից։

◆ Թիֆլիսում և շրջակայքում վերջերս լոյս ընկան մի շարք աղիւսի նոր գործարաններ, որի շնորհիւ աղիւսի գինը, շնորհիւ մրցման, 23—25 ռուբլուց իջաւ 15 ռուբլու հազարին։

◆ Թիֆլիսի քաղաքային վարչութիւնը որոշեց պատասխանատւութեան ենթարկել սատակած կենդանիները հաւաքող կապալառու Մեհրաբեանին, որը անթաղ վիճակի մէջ է թողնում սատակած կենդանիներին, որի հետևանքը լինում է այն, որ լուծվող դիակները սոսկալի գարշահոտութիւն են արձակում և ապականում են օդը։

◆ Օդեսսայի ցուցահանդէսում բրօնզէ մեդալի է արժանացել կօնեակ արդիւնաբերող «Արգօ» ընկերութիւնը։

## ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

### ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

Զաքաթալա, 18 յուլիսի

Ամսիս 17-ին Զաքաթալայի ծխ. դպրոցի հոգաբարձութիւնը, նոյն դպրոցի ուսուցիչների հետ միասին, յօգուտ ծխական դպրոցի կազմակերպել էր գր.-երաժշտական երեկոյթ-զբօսանք։

Գրական բաժինը բաղկացած էր ոտանաւորներից և մի գործողութեամբ դրամայից։ Խաղացին «Դօն-Պիէտրօ Կարուզօ», որը հասարակութեան վրա թողեց սառը տպաւորութիւն, այդ էլ նրանից, որ դահլիճը վերին աստիճանի շոգ էր, գրական բաժնից յետոյ միջոցը երկար տևեց, հասարակութիւնն ուղղակի ձանձրացաւ։ Պէտք է ասել, որ գրական բաժինը շատ երկար էր և ձանձրացնում էր հասարակութեան. բացի դրանից՝ զուր տեղը դահլիճում պահելով հասարակութեանը, դրսում կիոսկները առևտուր չէին անում. լաւ էր կառավարիչները զգացին այդ և ծրագրից նոյն երեկոյեան դուրս գցեցին մի շարք ոտանաւորներ։

Երեկոյթին երգում էր նոյն դպրոցի ուսուցիչ Սիմ. Մանուկօղլեանի պատրաստած քառաձայն խումբը, որ շատ լաւ երգեց մի շարք երգեր, մանաւանդ Ս. Մանուկօղլեանի դաշնակած վերջին երեք երգերը՝ 1) «Երկան գոմը», 2) «Հանդումը մնաց» և 3) «Ինչու Բինգեօլը»։ Գեղեցիկ երգեց խումբը նաև մնացած երգերը։

Առանձնապէս ուշադրութիւն գրաւեց մանդոլինիստների խումբը Ա. Խատաւեանի ղեկավարութեամբ, որ շատ շնորհալի կերպով նուագեց մի շարք մարշեր և երգեր. բայց ցաւօք սրտի պէտք է ասենք, որ շատ քիչ հասարակութիւն էր եկել այդ օրը զբօսանքին և արդիւնքը հազիւ 80—100 ր. մնաց դպրոցին։

Ներկայ

—

Մեծ-Ղարաքիլիսա, 24 յուլիսի

«Հայ դերասանների ընկերակցութիւնը» Դիլիջանից վերադառնալով շարունակում է իր ներկայացումները տեղիս ռօտօնդում։

Ամսիս 23-ին խաղացին Ծագարելլի «Խանում» 3 գործ. կօմեդիան։

Չը նայած պիէսի աջող ընտրութեան, խաղը, շնորհիւ դերերի անհամապատասխան բաժանման, անցաւ շատ սառն և ցանկալի տպաւորութիւն չը գործեց։

Խմբի ուժերից, ընդունակութիւններից և

ամպլուայից միանգամայն վեր էր այդ պիէսը։

Այդ երեկոյ դերակատարներից միայն փայլեց Արաքսեանը՝ «Դարդիմանդ» Ակոփի դերում, իր ուսումնասիրած և չափազանց տիպիկ խաղով։

3-րդ գործ. յետոյ երգեց մի քանի կուպլետներ, որոնք աղքատ էին բովանդակութեան կողմից և շատ անմշակ։

Ներկայացումը մուտքի կողմիցն էլ աննախանձելի դրութեան մէջ էր։

Առհասարակ հասարակութեան մէջ նկատւում է չափազանց սառն և անտարբեր վերաբերմունքը դէպի թատրոնը։

Իմ կարծիքով այս ցաւալի երևոյթը առաջանալուն մեծ զարկ է տուել այն հանգամանքը, որ այս ամառվայ ներկայացումները գեղարուեստական ոչ մի բաւականութիւն չեն պատճառել հանդիսականներին, այլ ձանձրացրել են նրանց։

Իմ կարծիքով աւելի լաւ է երկու շաբաթը մի անգամ կազմակերպել մի գեղարուեստական ներկայացում, քան շաբաթը երկու անգամ, այն էլ անյաջող։ Մ. Դ.

## ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Էջմիածին, 21 յուլիսի

«Մշակի» Թղթակիցը Գանձակից Զարեքայ վանքի անտառների շահագործման մասին գրած իր վերջին յօդուածում ասում է, որ իբր կալուածների կառավարիչ Տէր-Աւետիքեանի դէմ սինօդում բողոք է ստացված եղել և Էջմիածնից ինձ է յանձնված եղել այդ գանգատի քննութիւնը, ու աւելացնում է, թէ թէև չը գիտէ իմ քննութիւնը ինչ արդիւնք է ունեցել, բայց լաւ ճանաչելով ինձ, գտնում է, որ ես անձեռնհաս եմ այդպիսի քննութիւն կատարելու համար։

Պարտք եմ համարում յայտնել, որ սինօդը ինձ այդպիսի քննութիւն չէ յանձնել և ես ոչ մի քննութիւն չեմ կատարել։

Մատթէոս վարդապետ

—

Կ. Պօլիս, 14 յուլիս

Անցեալ տարի յունիսին Գէորգեան ճեմարանի լսարանական բաժինը աւարտելով վկայականս առած Կ. Պօլիս եկայ, պետական իրաւաբանական համալսարանը մտնելու մտադրութեամբ։ Համալսարանի վարչութիւնը վկայականս տեսնելով և տեղեկանալով դասաւանդված առարկաներին, ասաց, որ վկայականս հաւասար, մինչև իսկ բարձր է երկրորդական դպրոցի վկայականից, ուրեմն և համալսարան կրնամ ընդունուիլ, միայն, պէտք է նախապէս կրթական մինիստրութենէն վաւերացուի։ Անմիջապէս մինիստրութեան դիմեցի. այստեղ ալ լաւ մը նայեցան և ըսին, որ պէտք է դարձեալ Ռուսաստան ուղարկել, որպէս զի Թիֆլիսի կամ Բաթումի օսմանեան հիւպատոսը վաւերացնէ վկայականի իսկութիւնը և ապա միայն մինիստրութիւնը կը վաւերացնէ որպէս երկրորդական վարժարանի հաւասար. ահա այն ժամանակ համալսարանի դռները կը բացուին իմ առաջ։

Անմիջապէս պատրիարքարան դիմեցի և բացատրեցի խնդրի էութիւնը։

«Շատ աղէկ» ըսին և առին խեղճ վկայականս ու Բաթում՝ Մելեան քահանային ուղարկեցին։ Այդ ուղարկելն էր, այլ ես վկայականիս երեսը չտեսայ։

Ահա ճիշդ տարին կը լրանայ, բայց չըկայ ու չկայ։

Հայր Մելեանը պատրիարքարան տեղեկացուց, որ վկայականը Էջմիածնի դիւանին յղած է, որպէս զի պէտք եղած ինչ-որ օրինական գործողութիւններ կատարուին։ Ամիսներ անցան, մէջտեղ չելաւ։ Հեռագիրներ Բաթում, նամակներ Էջմիածնի ծանօթ-ընկերներուս, խնդիրներ, դիմումներ՝ թէ բերանացի և թէ գրաւոր՝ պատրիարքարանին, բայց բոլորն ալ զուր. չկայ ու չկայ։ Ցանկարծ երեք ամիս առաջ Էջմիածնի ընկերներէս մէկը գրեց, որ Էջմիածնէն շատոնց ուղարկուած է պատրիարքարան։ Անմիջապէս պատրիարքարան դիմեցի, այսքան երկար բաժանումէ ետքը վկայականս ողջ առողջ ողջագուրելու սրտատրոփ ակընկալութեամբ, բայց յուսախաբութիւն...։

Չէր ստացուած։ Մէկ քանի օր յետոյ նորէն գացի, չկար. երրորդ անգամ՝ չկար, հօթներորդ՝ չկար, 17-րդ՝ չկար ու չկար։

Էջմիածնէն ուղարկուած է ամիսներ առաջ, բայց Պօլսոյ պատրիարքարանը մինչև օրս ալ չէ ստացած։ Ուրեմն. ուրեմն երկու բան. կամ ուղարկուած և ճամբին կորսուած է, կամ Էջմիածնի և կամ Կ. Պօլսոյ պատրիարքարանի արխիվի մէկ անկիւնը իբրև անպէտք թուղթի կտոր ինկած է ճմրթկուած ու փոշոտուած։

Ի սէր Աստուծոյ թող վկայականս վերադարձնեն, պաշտօնական ծէսերն ու գործողութիւնները իրենց մնայ։

Խնդրեմ, Էջմիածնի մայր դիւանը վերջնական որոշ պատասխան մը տայ. ինչ եղաւ, ինչ եկաւ վկայականիս գլխուն։ Եթէ կորսուած է, պատասխանատուութիւնը որու վրայ կը ծանրանայ։ Հարկ եղածը թող տնօրինէ. չէ՞ որ անխղճութիւն է այսպէս անհոգ վերաբերիլ. չէ՞ որ ինձ համար այդ էական խնդիր է, մինչև իսկ ապրուստիս միակ հաստատուն աղբիւրը. առանց վկայականի ո՞րտեղ պաշտօն կարող եմ ստանձնել։

Յուսով եմ, որ գոնէ այս հրապարակական դիմումս ի զուր չանցնիր։

Եղ. Ամատունի

## ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Դիւանագիտական շրջաններում լուր է պտտում, որ Բեռլինի ֆրանսիական դեսպան Կամբօնը գերմանական կառավարութեանը արել է վերջին զիջումները, որից այն կողմը Ֆրանսիան չի անցնի և ոչ մի դէպքում։ Հարցը այժմ վերաբերում է Կոնգոյում մի քանի տեղեր զիջելուն։ Ափերի հողերի զիջումը անհնարին է գտնված։ Այս ամենի փոխարէն Գերմանիան հնարաւորութիւն պիտի տայ Ֆրանսիային՝ ազատօրէն գործելու Մարոկկօյում։

◆ Մադրիդում յամառ կերպով խօսւում է, որ մօտ ապագայում Մարոկկօյում տեղի կունենան անսպասելի սենսացիօն դէպքեր։ Հաւանական է համարվում Մուլէյ-Հաֆիդի գահընկէցութիւնը Աբդիւլ-Ազիզի կուսակիցների կողմից, որը ըստ երևոյթին հաճութիւն է առել մի քանի պետութիւններից։ Ասում են, որ Աբդիւլ Ազիզի կողմնակիցները դրամական խոշոր միջոցներ ունեն։

◆ Մի քանի անգլիացիների հետ Անգլիից արտաքսված «Daily Express» թերթի թղթակցի հետ միաժամանակ հեռացված է նաև «Westminster Gazette»-ի թղթակիցը։

◆ Մահմէդ-Ալի շահի գտնվելու վայրի անորոշութիւնը առիթ է տալիս հակասական լուրերի տարածման։ Ասողներ կան, որ նախկին շահը այս օրերս մուտք կը գործէ Թէհրան, որ նրան ցնծագին կը դիմաւորէ կօզակների գունդը, իսկ ոմանք էլ ասում են, որ Մահմէդ-Ալին Ռուսաստան է վերադարձել։

◆ Պարզվում է, որ Մահմէդ-Ալին շոգենաւ չէ նստել։ Այսօրինակ լուրը տարածված է եղել նրա կուսակիցների կողմից, որպէսզի պարսից կառավարութեանը մոլորութեան մէջ ձգեն։

◆ Պարսկաստանի մէջլիսի թիւրքմէն պատգամաւորը, որը մէջլիսի յանձնարարութեամբ պիտի ազդէր իր ցեղակիցների վրա՝ յետ կասելու Մահմէդ-Ալիին օգնելու մտքից, անցել է թիւրքմէն սահմանադրականների գլուխ և ընդհարվել է այն թիւրքմէնների հետ, որոնք նախկին շահի կողմնակիցներն են ներկայանում։ Հաւանականօրէն հէնց այս կռիւները առիթ տուին Մահմէդ-Ալիին հեռանալ։

◆ Թէհրանից անզադար հեռանում են բնակիչները։ Իր պաշտօնը թողել ու հեռացել է դէպի Եւրոպա պօստի և հեռագրի մինիստրը։ Մահմէդ-Ալիի կուսակիցները դէպի Թէհրան են արշաւել երեք կողմից։ Ստացված տեղեկութիւնների համաձայն, պարսկական զօրքերը առաջ են գնացել երկու կողմից։ Նրանց մի մասը գնացել է դէպի Սև լեռնաշղթան, իսկ միւսը՝ Շահրադի ուղղութեամբ։ Նախկին շահի զօրքերի թիւը չէ կարելի ճիշդ կերպով որոշել, բայց ասում են, որ նրանց թիւը 5000-ի է հասնում։

◆ Հարաւից Թէհրան է եկել բախտիարների առաջին խումբը։

◆ Թէհրանի ոստիկանութիւնը սկսել է գրաւել մասնաւոր անձերի զէնքերը։

◆ Ստացված նորանոր տեղեկութիւններին նայած, նախկին շահի կողմնակիցների թիւը օրէ-օր ստուարանում է։ Ենթադրում են, որ նախկին շահը յաղթանակ տանելու դէպքում կառավարութեան և մէջլիսի անդամները բաստ կը նստեն։

◆ Անտանելի շոգերի շնորհիւ Սենա գետի ջուրը այնչափ է տաքացել, որ գետի միջի բոլոր ձկները սատակում են։ Սատակած ձկները ջրի երեսն են դուրս գցվում մեծ քանակութեամբ։ Գետերի առողջապահութեան հսկող ոստիկանութիւնը եռանդուն կերպով բռնոտում է սատակած ձկները, որպէսզի նրանք աղքատ ազգաբնակութեան կեր չը դառնան և չը թունաւորեն նրան։

◆ Ամբողջ Բէլգիայում պարլամենտի ընտրութիւնների նախօրեակում մեծ պատրաստութիւններ են տեսնւում։ Ազատամիտները, արմատականները և ընկերվարականները ամենուրեք կազմակերպում են ընտրողական միութիւններ, հեռացնելով այս ձևով կղերականների թեկնածութիւնը։

◆ Բիլբաօյում զինված ընդհարում է տեղի ունեցել կարլիստների և հասարակապետականների միջև։ Կան ծանր կերպով վիրաւորվածներ երկուստեք։

## ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

23 յուլիսի

ԻՐԿՈՒՏՍԿ։ Սէզօվը Ֆարմանով մի քանի աջող թռիչքներ կատարեց։

ԲՐԻՒՍՍԵԼ։ Բելգիական շրջանային թռիչք։ Բրիւսսէլ-Մօնս քամու պատճառով բարձրացան միայն հինգ օդագնացներ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Երեք զինւորական օդագնացներ, բարձրանալով յուլիսի 24-ի գիշերը Պետերբուրգում 10 օֆիցերների հետ, 4 ժամ թռիչք գործելուց յետոյ իջան։

ՏՐԻԵՍՏ։ Երէկ աէրօդրոմում առաջին մրցանակը երկար թռչելուն համար ստացաւ Ֆիշէրը, երկրորդը՝ Վիտմէրը. բարձր թռչելուն համար առաջին մրցանակն առաւ Մինիխէրօն, որ հասաւ 3000 մետրի, երկրորդը՝ Ֆիշէրը։

ՌԱԴՕՄ։ Վարշավեան «Աւիատա» ընկերութիւնը կազմակերպում է շրջանային թռիչք Վարշավա - Լօձ - Պետրօվսկ-Ռադօմ-Լիւբլին-Սէդլեց-Վարշավա։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Ժողովրդական տանը եկած փոքրահասակ զինւորացուների երկրորդ խմբի համար պրինց Օլդենբուրգսկիի և զինւորական մինիստրի ներկայութեամբ ներկայացվեց «Պետրոս Մեծ» պիէսը։ Ներկայացումից յետոյ 2500 երեխաների ճաշ տրվեց։ Ցերեկով փոքրիկ զինւորները այցելեցին Էրմիտաժը, մի քանի թանգարաններ, կենդանաբանական այգին, դիտեցին հնութիւնները։

ՌԻԳԱ։ Այրվեց Շալիտի և Բեռլինի սղոցագործարանը։ Վնասը 100,000 րուբլի է։

ՕՐԷՆԲՈՒՐԳ։ Նահանգում լիակատար անբերրիութիւն է։ Բայց մի քանի տեղերում կան հացահատիկների պաշարներ։ Գալիս են անձրևներ։

ԵԿԱՏԵՐԻՆՕՍԼԱՒ։ Հեղեղը 3 վերստ տարածութեան վրա փչացրել է Մարիուպօլ կայարանը և Մարիուպօլ-Նաւահանգիստ երկաթուղագիծը։

ՕՄՍԿ։ Ճան. հաղ. մինիստրը մեկնեց Տօմսկ։

ՆԻԿՕԼԱՅԵՎ։ Ի նկատի ունենալով որ Օդեսսայում ժանտախտային հիւանդութիւններ են, տեղս եկող նաւերի վրա հսկողութիւնը ուժեղացվեց։

ՆՕՎԳՕՐՕԴ։ Հնագիտական համագումարի նիստում պատմաբան Իլօվայսկին պաշտպանեց իր թէօրիան, որ հերքում է վարեագներին կանչելու վկայութիւնը։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Ց. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

## ՏԵՂԵԿԱՏՈՒ

### ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

(Ամառային երթևեկութիւն)

(Ժամերը նշանակված են Թիֆլիսի ժամանակով)

—

ԹԻՖԼԻՍԻՑ ՄԵԿՆՈՒՄ Է

ԲԱԳՈՒ՝ **արագ № 2 գնացքը**՝ 9 ժ. 38 ր. առաւօտ., Աղստաֆա է հասնում 12 ժ. 15 ր. կէսօրին, Գանձակ՝ 2 ժ. 47 ր. ցեր.., Եւլախ՝ 4 ժ. 20 ր. ցեր., Հաջի-Կաբուլ՝ 8 ժ. 10 ր. երեկ., Բալաջարի՝ 11 ժ. գիշ., Բագու՝ 11 ժ. 33 ր. գիշեր.: **Պօստային № 4 գնացքը**՝ 12 ժ. 36 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 8 ժ. 28 ր. գիշ., Գանձակ՝ 6 ժ. 37 առաւօտ., Եւլախ՝ 3 ժ. 35 ր. առաւօտ., Հաջի-Կաբուլ՝ 1 ժ. 7 ր. կէսօր., Բալաջարի՝ 4 ժ. 24 ր. ցերեկ., Բագու՝ 5 ժ. 42 ր. ցերեկ.: **Մարդատար № 6 գնացքը**՝ 3 ժ. 34 ր. ցեր., Աղստաֆա է հասնում՝ 6 ժ. 46 ր. երեկ., Գանձակ. 9 ժ. 57 ր. երեկ., Եւլախ՝ 11 ժ. 54 ր. գիշեր.՝ Հաջի-Կաբուլ՝ 4 ժ. 22 ր. գիշ., Բալաջարի՝ 7 ժ. 36 ր. առաւօտ., Բագու՝ 8 ժամ 13 ր. առաւօտ.: **Խառն գնացքը**՝ IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան՝ 5 ժ. 15 ր. գիշ., Աղստաֆա է հասնում 9 ժ., 19 ր. առաւօտ., Գանձակ՝ 1 ժ. 36 ր. ցեր., Եւլախ՝ 5 ժ. 4 ր. երեկ., Հաջի-Կաբուլ՝ 11 ժ. 44 ր. գիշեր., Բալաջարի՝ 4 ժ. 33 ր. գիշ., Բագու՝ 5 ժ. 44 ր. առ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆ՝ **պօստային** № $^{74}/_{75}$՝ 1 ժ. գիշ., Ղարաքիլիսա է հասնում 8 ժ. 16 ր. առաւօտ., Ալէքսանդրօպօլ՝ 11 ժ. 50 ր. ցերեկ., Էջմիածին կայար.՝ 5 ժ. 7 ր. երեկ., Ուլուխանլու՝ 5 ժ. 34 ր. երեկ. (առանց Երևան մտնելու)։ Սակայն Ուլուխանլուից առանձին գնացքը ուղևորվում է Երևան 6 ժ. 11 ր. երեկ. և հասնում է Երևան 6 ժ. 54 ր. երեկ., Նախիջևան՝ 11 ժ. 2 ր. գիշեր., Ջուլֆա՝ 12 ժ. 46 ր. գիշերվայ: **Մարդատար-ապրանքատար** № $^{78}/_{79}$ **գնացքը**՝ 5 ժ. 48 ր. երեկ., Ղարաքիլիսա է հասնում 1 ժ. գիշերվայ, Ալէքսանդրօպօլ՝ 4 ժ. 34 ր. գիշ., Էջմիածին կայարան՝ 9 ժ. 45 ր. առաւ., Երևան՝ 11 ժ. 10 ր. ցերեկվայ և սրանից դէնը այլևս չէ գնում:

ԲԱԹՈՒՄ՝ **արագ. № 1 գնացքը**՝ 11 ժ. 8 ր. գիշ., Միխայլօվօ է հասնում 2 ժ. 10 ր. գիշ., Բաթում՝ 9 ժ. 43 ր. առաւօտ: **Պօստային № 3 գնացքը**՝ 10 ժ. 47 ր. առ., Միխայլօվօ է հասնում 3 ժ. ցերեկվայ, Բաթում 12 ժ. 35 ր. գիշ.: **Մարդատար № 5 գնացքը**՝ 5 ժ. 15 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 9 ժ. 27 ր. երեկ., Բաթում՝ 6 ժ. 26 ր. առ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով ըստ հարկի կարևորութեան 10 ժ. 3 ր. երեկ., Միխայլօվօ է հասնում 4 ժ. 41 ր. գիշ., Բաթում 6 ժ. 4 ր. երեկոյեան:

ԲՕՐԺՕՄ՝ **մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 8 ժ. 18 ր. առաւօտ., Գօրի է հասնում 10 ժ. 52 ր. առ., Բօրժօմ՝ 1 ժ. 38 ր. ցերեկ.: **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 3 ժ. ցերեկ., Գօրի է հասնում 5 ժ. 34 ր. երեկ., Բօրժօմ՝ 8 ժ. 28 ր. երեկոյեան:

ԹԻՖԼԻՍ Է ՀԱՍՆՈՒՄ

ԲԱԳՈՒԻՑ՝ **մարդատար № 5 գնացքը**՝ 4 ժ. 25 ր. ցերեկ.: **Պօստային № 3 գնացքը**՝ 9 ժ. 52 ր. առ.: **Արագ № 1 գնացքը**՝ 10 ժ. 24 ր. երեկ.: **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 9 ժ. 5 ր. երեկ.:

ՋՈՒԼՖԱ-ԵՐԵՒԱՆԻՑ՝ **պօստային** № $^{72}/_{73}$ **գնացքը**՝ 7 ժ. 38 առաւօտ.: **Մարդատար-ապրանքատար**՝ № $^{80}/_{81}$ **գնացքը**՝ 1 ժ. 26 ր. ցերեկվայ:

ԲԱԹՈՒՄԻՑ՝ **արագ № 2 գնացքը**՝ 8 ժ. 52 ր. առաւօտեան: **Պօստային № 4 գնացքը**՝ 11 ժ. 40 ր. գիշ.: **Մարդատար № 6 գնացքը**՝ 2 ժ. 54 ցերեկ. **Խառն գնացքը** IV կարգի վագոններով՝ 4 ժ. 17 ր. գիշերվայ:

ԲՕՐԺՕՄԻՑ՝ **Մարդատար** № $^{9}/_{10}$ **գնացքը**՝ 9 ժ. 28 ր. գիշ.: **Մարդատար** № $^{7}/_{8}$ **գնացքը**՝ 7 ժ. 18 ր. առաւօտեան:

**Ծանօթութիւն.**—Արագ գնացքներով (№ 2՝ Թիֆլիսից Բագու՝ և № 1 Բագու-Թիֆլիս) առանց վագոնը փոփոխելու կարելի է հաղորդակցել Թիֆլիս-Բագու-Ռոստով, միայն վճարելով պլացկարտի գինը։

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
**ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ**
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
«606»-Ի ՆԵՐԱՐԿՈՒՄ ԲԺՇԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹԵԱՄԲ՝ 11—12 ժ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան և վեներական (սիֆիլիս) հ.:
Կ. Մ. ՉԻԿՕՎԱՆԻ—9½—10 ժ. աչքի, ներքին և նեարդային։
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.:
Ն. Ց. ՄՈՒԼԻՆ—10—12 ժ. ականջի, կոկորդի և քթի հիւ.:
Մ Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներական վիրաբուժութեան և միզասեռ. հ.:
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—12—1 ժ. ներքին և երեխայոց հիւ. և ծաղկահատ.:
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՉԱՑ—12½—1 ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Գ. Ց. ԳՈՒՐԳԷՆՕՎ—1—1½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հիւ.:
Բ. Գ. ԱՂԱՍԱՐԵԱՆ—1½—2 ժ. ներքին և երեխայոց հիւ.:

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝
ԿԻՆ ԲԺԻՇԿ Պ. Ս. ՋԻԼԲԵՐՉԱՑ—6—6½ ժ. մանկաբարձ., կանանց և երեխայոց հ.:
Մ. Գ. ԱՒԵՏԻՍԵԱՆ—6—7 ժ.:

Վճարը 50 կ.: Զքաւորները ձրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։
Հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժշկապետ Բ. Նախասարդեան
3. 0—75

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինօվսկայա փողոց, № 8.
(Կ. Հ.) 416. 100—26

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ
(հիմնված է 1860 թ.)
ՈՍԿԷ ՄԵԴԱԼ, ՊԱՐԻԶ 1900 թ.
ՍԱՊՈՆ ԾԱՂ-ԿՈՂ „ՄԱՆՈՒՇԱԿ"

Ծաղկող «Մանուշակ» գլիցերինեան սապօնը առաջացնում է թարմ մանուշակի իսկական հոտ, թարմացնող մեծաքանակ փրփուր և տալիս է կաշուին փափկութիւն և քնքշութիւն։

ХИМИЧЕСКАЯ С.ПЕТЕРБУРГСКАЯ ЛАБОРАТОРІЯ ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ

Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами — Тифлисъ, Баку, Батумъ.

523. 8—3

Ախալքալաքի հայոց եկ.-ծխական երկսեռ դպրոցի համար հարկաւոր են հայոց լեզուի, ռուսաց լեզուի, թւաբանութեան, բնագիտութեան, աշխարհագրութեան, հայրենագիտութեան

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՒ ՎԱՐԺՈՒՀԻՆԵՐ

դասագինն է 20 ր.: Գծագրութեան և ձեռագործի վարժուհի 25 դաս, ռոճիկ 400 ր.

Երգեցողութեան ուսուցիչ և խմբապետ, խմբապետը պէտք է եկեղեցու համար խումբ կազմէ՝ շաբաթ երեկոները, կիրակի առաւօտները և ճաշերին խմբի հետ երգէ եկեղեցում, այլ և ազգային-եկեղեցական տօներին պէտք է պատրաստէ պատշաճ շարականները, որ խումբը եկեղեցում երգէ իր ղեկավարութեամբ։

Խմբապետ-դասատուն ունենալու է 13 դաս երգեցողութեան և 7 այլ դասեր, ընդամենը ռոճիկն է 580 ր.:

Ցանկացողները թող դիմեն վաղօրօք հետևեալ հասցէով. Ахалкалаки, Попечительству армянской церковно-приходской школы.

(2.) 740. 2—1

Նուխու ՀԱՅՈՑ ԵՐԿՍԵՌ ԴՊՐՈՑՆԵՐԻ համար հարկաւոր է մի փորձառու ԱՒԱԳ-ՈՒՍՈՒՑԻՉ 14—18 դասով։ Առաւելութիւն տրվելու է ուսուցչանոցաւարտ և ճեմարանաւարտներին։ Խնդիրների հետ պէտք է ուղարկել ուսման վկայականները։ Ցանկացողները թող իրանց պայմանները դիմեն հոգաբարձութեան։

Հասցէ՝ Нуха, Попечительству арм. церковно-приходской школы.

(Հ.ու.կ.) 741. 3—1

№ 4711 ԹԱՆՁՐ ՇՊԱՐԸ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՄԵՆ ՄԻ ՏԻԿՆՈՋ

ՏՈՒԱԼԷՏԻ ՎՐԱ։

Սեփական շահի տեսակէտից գնելիս պէտք է համոզվել, որ գնածը իսկական № 4711 ԹԱՆՁ

ՇՊԱՐՆ Է։

№ 4711 օրէնքով հաստատված է։

(օգ. 17) 272852. 2—1

Առևտրի և Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։

**Գործնական** պարապմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster. Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանօնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) **Օտար լեզուներ.** 2) սղագրութիւն. 3) դակտիլլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Պարապմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է երկրորդ զուգընթաց բաժանմունք, որը մանաւանդ յարմար է օտարաքաղաքացիների համար։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմբերի 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. 10—12 և եր. 4—7 ժամը։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքերում։

Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝
Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(Հ.ու.կ.) 738. 0—1

Утвержденные Министерств. Торговли и Промышленности
ТОРГОВАЯ ШКОЛА
СЪ ПРАВАМИ ПРАВИТЕЛЬСТВЕН. СРЕДНИХЪ УЧЕБНЫХЪ ЗАВЕДЕНІЙ
И
БУХГАЛТЕРСКІЕ КУРСЫ
ДЛЯ ЛИЦЪ ОБОЕГО ПОЛА
А. И. ТЕРЪ-КАСПАРОВА
Баку, уголъ Красноводской и Меркурьевской. Телефонъ № 10—56.

ШКОЛА и КУРСЫ даютъ полную теоретическую и практическую подготовку к бухгалтерской и прочей дѣятельности въ торгово-промышлен. и иныхъ учрежденіяхъ.

Полный курсъ въ школѣ три года, на курсахъ 6—8 мѣсяцевъ.

Пріемъ въ младшій приготовительный и первый классы ШКОЛЫ съ 20 Августа НА КУРСЫ съ 1 Сентября ежедневно.

Представившія свидѣтельства объ окончаніи 2-хъ классн. сельск. училищъ, 4-х классовъ городскихъ училищъ и перваго класса среднихъ учебнихъ заведеній принимаются въ первый классъ ШКОЛЫ безъ экзамена.

Пробныя свѣдѣнія о ШКОЛѢ и КУРСАХЪ выдаются и высылаются безплатно.

(Հ. Կ.) 709. 20—6

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.